

# ՀՆՉԱԿ

## ԻՆՉ ԱՆԵԼ

Չստացան տեղերից մեզ համուժժ են նամակներ լի ասան ջող հարցերով: «Ամենքին յայտնի է, — կարգում ենք այն նամակներում, — որ թիւրբաձայ ժողովրդի գրութիւնն անտանելի է: Քանի գնում է՝ այդ գրութիւնն աւելի վատթարանում է: Այսօրվայ հայ երիտասարդ սերունդն ընկել է այնպիսի հանգամանքների մէջ, երբ նրան անուշադիր թողնել ժողովրդի գրութիւնն անկարելի է, երբ շորս կողմ ամեն բան նրա սկանչին խօսում է ժողովրդի ճակատագրի մասին, երբ ամեն բան նրա աչքին խօսում է իր պարտականութիւնը ժողովրդի վերաբերութեամբ: Օգնել ժողովրդին — գործել է մի տեսակ անհրաժեշտ պարտականութիւն իւրաքանչիւր ազնիւ քրտի համար: Մենք հաւատացած ենք, որ միմիայն յեղափոխական գործունէութեամբ կարելի է բարեկարգել ժողովրդի գրութիւնը: Մենք ուզում ենք գործել խոյս չկէս սկսել հէնց այսօր գործը, ինչից սկսել այդ գործը...»

«Հնչակի» էջերում արդէն խօսված է դրա մասին: Այսօր կրկնում ենք զարմեայ կրկնութիւնն անհրաժեշտ է: Կենսապէս հարկաւոր համարեցինք այդ հարցին պատասխանել հրապարակապէս, քանի որ հասանական է կան հաւ ուրիշներ, որոնց ոչ պակաս կերպով մատառանջութիւն է պատճառում այդ հարցը:

Այո, ազնիւ ընկերներ, մեզ հասկանալի են ձեր զգացումները: մենք նրանց գնահատում ենք: Տեսնելով այն անկարգութիւնը, որ թագաւորում է մեր հայրենի երկրում, տեսնելով իրերի այն անիրաւու մահացնող վիճակը, որ քանուժ է հարազատ ժողովրդի արխը, տեսնելով այն ստրկութիւնը թէ՛ քաղաքական և թէ՛ տնտեսական, մարդկային հոշոտը ստորացնող այդ բէժիմը, որ թիւրք բռնակալութեան ու կամայականութեան արդիւնք է, — տեսնելով այդ բոլորը, չի գտնվիլ և մէկ ազնիւ հայ սիրտ, որ, մտածելով այդ երեւոյթների ու ժողովրդի վրայ, չզրանայ նրա գլխում այս օրհասական հարցը թէ՛ «հիմա՞ ինչ անել, ինչից սկսել»:

Չեզ հետ միասին համոզված լինելով, որ յեղափոխութիւնն անհրաժեշտ է, ասանք այդ հարցին պատասխան: Որքն է յեղափոխականի առաջին աշխատութիւնը, որ սկզբնաւոր հիմքը գնէ այդ գործի, որպէս զի գրան յաջորդ յեղափոխական գործողութիւններն աջակապէս առաջ երթան: Պատասխանն այդ հարցին պարզ է ու

կարճ. — պէտք է կազմել մի յեղափոխական կուսակցութիւն զիտակցական յեղափոխականներից: Յեղափոխական կուսակցութեան կազմակերպութեան ձևն ու կերպը մենք ներկայացրել ենք «Հնչակի» № 9 և 10-ի մէջ: Այս լից կրկնելը մենք աւելորդ ենք համարում: Յեղափոխական կուսակցութիւնը պէտք է մշակէ իր գործունէութեան որոշ ծրարիրը, որ լիովին համապատասխանէ կուսակցութեան որոշ նպատակներին: Մենք հրաւիրում ենք յեղափոխական գործին իւրաքանչիւր զիմողի առանձին լաւջ աշակերտութիւնը նպատակի որոշման վրայ, որի համար հարկաւոր ենք համարում ասել այստեղ մի քանի խօսք:

Նպատակի կողմից բաւական մութ հասկացողութիւններ կան գտնազան խմբերում: Հասկացողութիւնների այդ մթութիւնը կարող է լաւջ արդելք յայտնվել յեղափոխական խմբերի մէկ ընդհանուր կազմակերպութեան նախադի իրականացման: Հայկական յեղափոխութեան նպատակը չէ կարող լինել ոչ «ազգային վերածնութիւն» (նշ) և ոչ «ազգային անկախութիւն» (իրբե այդ պիտի), որոնք յայտնվում են մութ խօսքեր և միմիայն մութ խօսքեր, եթէ նրանց չէք կցորդում հարկաւոր բացատրութիւններ և ուրիշ նշնշափ անհրաժեշտ պայմաններ: Այդ երկու խօսքերից առաջինը, «ազգային վերածնութիւնը», իրբե նպատակ մեզ միանգամայն անհասկանալի է: Ինչ են ուզում ասել այդ խօսքով դրա պաշտպանները: Այս խօսքին կարելի է տալ ամեն տեսակ մեկնարանութիւն, բայց և ոչ մէկն այդ մեկնարանութիւններից չի լինիլ ոչ պարզ ոչ որոշ ոչ ճշգրիտ: Ազգային վերածնութիւն արդեօք այն կերպարանքով ինչ կերպարանք ունէր հայ ազգը նրանից պարեր առաջ թէ մէկ ուրիշ կերպարանքով: Ինչ կերպարանքով. ինչպէս հասկանար: Ոչ մի երկրում չէ կղել և չէ կարող լինել յեղափոխութիւն, երբ նրա նպատակն այնչափ անորոշ կերպով է գրված, որ ամեն տեսակ բացատրութեան միակերպ իրաւունքով կարող է յարմարվել: Նշնք կարող ենք ասել և ազգային անկախութեան մասին, երբ գրան ձգտում են պարզապէս ազգային անկախ վիճակ ունենալու համար: Մէկ անգամ լից ընդ միշտ պէտք է իմանալ, որ յեղափոխութեամբ պիտի ձգտել հայ ժողովրդի կացութիւնը գնել քաղաքական ու սոցիալ-տնտեսական այնպիսի պայմանների հարգի վրայ, որ իսկապէս կարողանայ նպատակել նրա լիակազմին ու կատարեալ զարգացման ու բարօրութեան: Յեղափոխականների նպատակի հիմքը պէտք է լինի դա, և միմիայն դա: Եթէ այսօր յեղափոխականները պէտք է



թեամբ պէտք է զիմանոց կատարութեան կատարի  
հարձու մննորին, որպէս վատաշու թեամբ, հաստատակա-  
մութեամբ ու սիրով նա կարծէ քաղաքական ու սոցիա-  
լական յեղափոխութեան յայժմանակը առնելու համար:

Իսկ նրանց, որոնք ասում են թէ՛ դեռ «պատրաստ  
չենք յեղափոխական գործունէութեան համար», թէ՛ դեռ  
պէտք է «ուսումնասիրելն ասորիններով ժողովրդի դրա-  
թիւնը», թէ՛ պէտք է «ձեռք բերելն որ եւ է մասնագի-  
տութիւնը» (հ. 1), ստիպելն է այն. — այդպէս խօսողներին  
պատասխանել մենք թողնում ենք մի հնչակատար սուս  
սոցիալիստ յեղափոխականին, Պ. Լ. Լափրովին. — «Հա-  
սարակական գործում, — ասում է նա, — գործունէութեան  
համար պատրաստութիւն եւ նայն իրեն գործունէութեան  
մասնակցները ֆիզիկալիկ են (fictif): Եթէ անձնագրու-  
թիւնն անի բառական խելք ու կենդանի, այդ մասնակ  
ուսանում են ուսուցանել յոգի, եւ սեփական  
գործադրման նպատակով գերադասել միջոցն է՝ աշխատել  
ուրիշներին գործադրելն: Այն դեռ պատրաստ չեն՝ գրեթէ  
միշտ ուրիշ ոչինչ է, եթէ ոչ ետականութեան ու անար-  
բերութեան մի խօսք գործից խոստովելու համար: Այնպէս  
ստարիկը թէ թէ օրեալիկական բառական պատրաստութիւն  
չունենալով չէ կարելի ձեռք գործնել պրակտիկական գոր-  
ծունէութեան, սպասելուցանում է միայն այն բանը, որ անձ  
նագրութիւնը ծուլանում է ինքնագործադրումով պարտա-  
վել: Չարգայանն աստիճանը կարող է որեւէ սոցիալ յեղա-  
փոխական գործում մասնակցողի աստեղ աչքի ընկնող եւ  
կամ աստեղ ստորագրող գիւրը, բայց թէ աստիճան եւ  
թէ երկրորդ չափով սոցիալ յեղափոխական գործին մաս-  
նակցել կարող է ամեն մէկ անկեղծ սոցիալիստ յեղա-  
փոխական»:

Այսպէս, նրանք, որոնք խօսում են թէ՛ «դեռ պատրաստ  
չենք», նրանք անարժան են հաստատի, նրանք խաբամ են  
թէ՛ իրենց եւ թէ՛ ուրիշներին, նրանք անպէտք խոսեր են,  
որ պոկելով, պիտի դուրս շարժել արտից, սակաւացը-  
նելու համար նրանց թիւը, որ, գծրազգարար, իբրեւ  
անպիտան բոյս, բառական աստատօրէն բուսում է, վնաս-  
ակալ անպարտաբեր:

### ՆՐՐ ՀՈՍՏՆՔ

Խոսակցութիւն խաղաղ աստիճանականի  
և  
սոցիալիստ յեղափոխականի մէջ:

Մտազգայնացում եւ կանոնադրական բլրի վրայ, ստորաթա-  
խիստ ծառի տակ պարկած էին երկուսն էլ: Նրանցից մէկը  
միջազատակ, գերակ, կարճ կտրած մաղկաբով, ինքնաբա-  
նական գէմբով երկուսն ասորեականից անց մի երկատասարդ  
էր: Քո խաղաղ աստիճանականին էր: Քարի վրայ պար-  
կած՝ նա փայտի կտրով խաղում էր հողի հետ, փորձի  
բույս, երբեմն խոստանում բերանը ծամելով, աստիճանով

կտրում է գէն զցելով, նորից շարունակում փորձերով  
հողը, դուրս սոկել խոտը: Միւսն ասելի բարձրահասակ,  
նիհար, 21,25 տարեկան, մտախոհ գէմբով, սրի վրայ  
արտայայտում էր անձնագրապատկերն ու հաստա գէզ  
իր համարումների համարութիւնը: Խոտի վրան կողքով  
թեքված ձախ թևի վրայ, նա մոլար հայեացով գիտում  
էր լեռնոս ու թաւանասա զեղանկար հետաւանը, որտեղ  
արեղակի ոսկէ ճառագայթները գուզողում էին արագա-  
սակ, մերթ ընդ մերթ յայտնվող գետի արծաթէ ժառանգնի  
վրայ: Այդ երկրորդը սոցիալիստ յեղափոխականին էր:  
Նրանք խօսում էին, միայն երբեմն - երբեմն կարճատե-  
լութիւնը տիրում էր նրանց մէջ...

Խ ո ս գ ա գ ա ս ա ջ ա գ ի մ ա կ ա ն . — Ահա եւ մի նոր  
հասանք, գաղափարական հասանք, որ սկսում է ձագից  
հայերիս մէջ: Իմ խօսքս ձեր, սոցիալիստներից, մասին  
է: Կրան կից դուք յայտնվում էք յեղափոխականներ նայն  
խիլ յանուն ձեր նայն սոցիալիստական ուսման: Ահա այդ  
կէան ինձ մտք է թուում: Հայ ժողովրդի դրութիւնն այս-  
օր այնքան աննախանձելի է, որ ես գուցէ կարող լինել  
ինձ բացատրել (բայց ոչ համոզանել) ձեր, այդպէս ու-  
սած, յեղափոխականութիւնը, եթէ դուք այդ գործունէ-  
ութեան ձեռք պարկած լինելիք հայ ժողովրդին ազատելու  
համար օտար լծից, օտար բռնակալութիւնից, ունենա-  
լով նպատակ հայ ժողովրդին ասլ ինքնաբերութիւն, մի  
քաղաքական մարմին իր քաղաքական յայտնի գերակ,  
ինչպէս այսօր թիւրքիայի լծից ազատված միւս մանր  
տէլութիւններն են: Յանապատանը, Սերբիան, կամ Հէնց  
Բալգարիան: Թերեւ նմանապէս կարողանայի բացատրել  
ձեր յեղափոխական ձգտումները, եթէ դուք ուզում լինե-  
լիք այդ ստիպողական միջոցներով պարտաւորելով թիւր-  
քիային գործադրել թիւրքիայի գաղտագրի ճլրկ յոյուսմբ,  
որ մինչ այժմ մեռած ասա է մնացել: Բայց դուք այսօր,  
իրբե սոցիալիստներ, ուզում էք յեղափոխութիւն անել  
յանուն մի բանի, որ դուք ձեր հասարակական ի գ է ա լ ն  
էք համարում: Չգիտեմ թէ գա որչափ գործնական է:

Ս ո ս ի ա լ ի ո ս ա յ ե գ ա փ ո խ ա կ ա ն . — Կա սեռ-  
նամ ես, որ դուք, ինչպէս, երբեւ եւ ուրիշ հայեր դեռ  
չէք բնութել մեր մէջ ձագող այդ ն ս ր հ ս ս ա ն ք ի , որ  
պէս ասում էք դուք, սոցիալիստական ասման միտքը,  
նշանակութիւնը, կտրութիւնը էլ հէնց գրա շնորհով դուք  
նրան անուանում էք լիկ գաղափարական հասանք: Ծճմա-  
բիտ է, որ սոցիալիզմը հայերիս մէջ մի նոր հասանք է  
եւ նայն այդ պատճառով դեռ շտանրի համար նա մտք  
է ընդհանրապէս եւ մտք է մասնաւորապէս հայ ժողովր-  
դի միւսերերութեամբ: Բայց արդեօք, յիրաւի, նա լիկ  
գաղափարական հասանք է թէ՛ սննի իր բուն կենսական  
կողմը, սննի իր գրական հիմքերը հայկական իրականու-  
թեան ծայրում: Արդեօք, յիրաւի, հայ ժողովրդի ներկայ  
կացութեան կերպերը չեն, որ ընդհանուր տեսակէտից  
յայտնվում են մեր մէջ սոցիալիզմի ձագման պատճառ-  
ները եւ որ քանի երթուց, այնքան սոցիալիզմը պարզապէս  
կերպով շօշափելի կարծես իր կարեւորութիւնը մեր ժո-  
գովրդի ծանր հիւսնագրութիւնը բուժելու համար: Հայ ժո-

Զորքի ներկայ սօցիալական դրութիւնը և այն հասարակական կազմակերպութիւնը, որից առաջացել է և որի մէջ ծնւելած է այդ դրութիւնը, ընդհանուր առմամբ, համեմատաբար այնքան խորթ, այնքան օտար չէ եւրօպական ժողովուրդների սօցիալական դրութիւնից, որքան այդ թուով է առաջին անգամից Աւելի խորթ թափանցելով, դուք կտեսնէք, որ բոլոր եւրօպական ժողովուրդներն ունեն իւր մէջ օրգանն ա կան սերտ կապ: Այդ կապի զորութեամբ նրանց ամենքի առաջադիւնութեան հանգէպ ընդհանրապէս առաջանում են նմանօրինակ խոչնդոմներ, նմանօրինակ խնդիրներ ու երևոյթներ հասարակական կեանքի զանազան ճիւղերում: Բնականաբար, այդ խոչնդոմները, կամ խնդիրներն ու երևոյթները զանազան ժողովուրդների մէջ ունեն իրենց առանձնայատկութիւնները: Հայ ժողովուրդը եւրօպական ժողովուրդների հետ նայնպէս ունի օրգանական կապ: Մենք տեսնում ենք, որ այն սօցիալական, այն տնտեսական երևոյթներն ու խնդիրները, որոնք աւելի վերջ երևան են եկել հայ ժողովրդի կարգերում, — բնականապէս, ինչպէս ասացի, ունենալով իրենց առանձնայատկութիւնները, — նրանք արդէն մեզինց առաջ տեղի են ունեցել եւրօպական ժողովուրդների կեանքում: Այստեղ ևս փոքր ինչ կանգ կանեն և նախ քան շարտարկելու մտքիս բացատրութիւնը, ևս կախատեմ կարճ կերպով ներկայացնել ձեզ հայ ժողովրդի ներկայ կեանքի կազմակերպութեան այն կողմը, որ ամեն մի ժողովրդի զայսիթեան ու էութեան հիմքն է: Եւ խօսում եմ ժողովրդի տնտեսական կեանքի — նրա արդիւնագործութեան ձևի ու կերպի մասին: Հայ ժողովրդի արդիւնագործութեան ներկայ միջոցներն ու կերպերը զեռ բաւականաչափ գտնուում են իրենց այն շրջանում, որ Եւրօպայի ժողովուրդներն առաւել կամ պակաս տարբերութեամբ ունեցել են միջին դարերում: Եւրօպական մի քանի ժողովուրդներ իսկ արդիւնագործութեան այդ շրջանում են եղել տակաւին մինչև այս դարու սկիզբը և նայն իսկ կէսը: Բայց որոնք են այդ շրջանում ժողովրդի արդիւնագործութեան միջոցներն ու կերպերը: Մենք տեսնում ենք, որ ինչպէս միջնագործական Եւրօպայում, վաղուց ի վեր Հայաստանում տիրում է անհատական մասնաւոր արդիւնագործութիւնը: Այդ արդիւնագործութեան զարմիքները, միջոցները բանօրների մասնաւոր սեփականութիւնն են: Հայաստանի քաղաքներում տիրում են արհեստները, իսկ գիւղերում մանր սեփականատէրերի հողագործութիւնը. այդ մի կերպն է: Հողը, դրա գործիքները, մանր գործարաններն ու գործիքները — նրանց արդիւնագործութեան միջոցներն են և, նշանակված լիւր լինելով լիկ առանձին անհատի գործածութեան համար ու նրա սեփականութիւն, դրա զորութեամբ այդ միջոցները յայտնվում են անգարգապած, անճանի օւմանք, հետեւաբար և սկսելով Հայաստանում վաղուց ի վեր արդիւնագործութեան արդիւնքները նշանակված են եղել առաջնապէս արդիւնաբերողի սեփական անձի ջանքի գործածութեան և յետոյ փոքրիկ բէձ օ ս ի (բաշօն, շրջան) բնակիչների պէտքերը լրացնելու համար: Այդ

անհատական արդիւնագործութեան զի՞ մենք տեսնում ենք Հայաստանում որպէս արհեստաւորների, նայնպէս գիւղական համայնքներ: Հայ արհեստաւորների համայնքները եւրօպական միջնագործական ց կ ի ս եր ի մի տեսակն են, ունենալով իրենց տեղային ու յիշական առանձնայատկութիւնները: Արհեստաւորների համայնքներն այսօր քայքայման վրայ են, եթէ չասեմ թէ քայքայված են նրանք քայքայվում են այն պատճառով, որ նրանց առաջադիւնագործութիւններն աւելի առատ են քան պահանջն այդ արդիւնագործութիւնների մէջ: Մեքենայագործ աւելի կատարելագործված, աւելի նորը տաճան արդիւնագործութիւնները մուտք գործած լինելով երկրում, հայ արհեստաւորների ձեռագործ կոսիտ, նա հասարակական արդիւնագործութիւնները չեն գիտնում նրանց մրցման իւր առաջին անտակի արդիւնագործութիւնները բաւականութեւն առելով պահանջին, երկրորդ անտակները ժողովրդում կուտակվում են խանութներում կամ շուկաներում, մնալով անպահանջ: Այդպիսով արհեստաւորների համայնքները նիւթապէս տկարանում են: Նիւթապէս տկարանաւոր մինչև անանկութիւնն ու քայքայումը մի քայլ է: Այսպէս, արեւտրական նոր, աւելի լայն հասանքի ու արդիւնագործութեան նոր կատարելագործված կերպերի շտրհով, որ մուտք են գործում երկրի ներքը, համայնքները մրցման շղիմանալով, քայքայվում ու կործանվում են և նրանց անդամները ցրվում: Այդ անգամների ամենաշնչին մասն ուստանների կարգից տեղական զանազան հանդամներների շտրհով մի կերպ կարողանում է այդ մրցման պատերազմից կենդանի դուրս գալ և հիմնում է իր արհեստանոցները: Այդպիսին իրենց մէջ կրում են արդէն ազազայ մանր կառվարաւոր, արհեստաւոր շտրհով, իսկ քայքայված համայնքների ցրված անդամների ահազին մեծամասնութիւնը, որ մրցումանը չէ կարողացել գիտնաւոր, այսօր ընկած է փողոցներում: պատրաստ ամեն տեսակի գործի գիմերը, միայն թէ իր ապրուստը հայհայթէ, Բնականաբար, իրբե արհեստաւոր այդ ճիւղում նրան աւելի յարմար է աշխատել քան ձեռք գարնել որ և է ուրիշ աշխատութեան իւր մասնում է իրբե հատապակ բանաւոր իր երեկելոյ ընկերոջ արհեստանոցը, որ արդէն փոքրիկ զրամագլխի տէր է և իր ձեռի տակ ունի նաև տակնեակ և աւելի բանւորներ: Եւ այդպիսով մենք նկատում ենք, որ մանր արդիւնագործութեան սիտակ մեր մէջ փոփոխվում է և կամայ կամոյց աւելի լայնանում, աւելի ընդարձակվում է, հին համայնական հարատուութիւնը, որ առաջ պատկանելի էր ամենքին, դարձնելով սեփականութեւն սակաւաթիւ անհատների, — միանգամայն ոչնչացնելով համայնական կերպերի գոյութիւնը: Այդպիսի վիճակի ենթարկվել են եւրօպական միջնագործական ց կ ի ս եր ը զեռ արանից դարեր առաջ, թէև ըստ մեծի մասին տարբեր պայմանների ու հանգամանքների շտրհով, այսինքն մասն ու ֆ օ ս ի տ ու ր ա յ ի երևան գալու շտրհով, մինչդեռ մեզ մտայդ բանն այսօր կատարվում է եւրօպական միջնայոց գործ արդիւնագործութիւնների մեր երկրում մուտք գործ

ձեռու պայմանից: Au fond, խստագույն երկր. տեղն էլ այդ իրողութեան պրոցէսն իր հետեւներեւով արհեստաւորների միճակի փոփոխման վրայ միատեսակ ազդեցութիւն է ցոյց տալիս Այդ բոլորը ապացուցանում է, որ ընդհանրագէտ մեր ժողովուրդը անտեսական մի յայտնի ճիւղում առաջանում է այն ճանապարհով, որով առաջացել են եւրոպական ժողովուրդները: Այս վերջինները նոյն ճանապարհով ընթանալով, դանազան մեքենաների զիտերի շորհով, որ շերտարանափոխեցին, յեղափոխեցին մանուֆակտուրական արդիւնագործութիւնը, ի վերջոյ եկան հասան գործարանական (fabrique) խոշոր արդիւն ա զ ո թ ծ ու թ ե ս ան, որ այսօր գտնվում է իր դարդացման ամենարարձը շրջանում: Յայտնի է թէ այդ գործարանական, այդ կապիտալ խտանքան խաչոր արդիւնագործութիւնն ինչ խորին անհատաւորութիւն ծագեցըրեց եւրոպական ժողովուրդների դանազան կարգերում ինչ ծայրահեղ թշնամութիւն առաջացրեց եւրոպական հասարակութեան դանազան գասակարգերի մէջ, աւելի ու աւելի սուր կերպարանք տալով այդ գասակարգերի հասարակական շահերի, ձգտումները ու կայութիւնների տարբերութեանը: Նպատակիցս շատ կընդվէի, եթէ հիմա ուղեւորի բացատրել թէ ինչպէս առաջացան այդ թշնամութիւնը, այդ մեծ տարբերութիւնը, այդ խորին անհատաւորութիւնը: Նա արդէն շատ ու շատ անգամ բացատրված է: Փաստերը, իրողութիւնն իրենք արդէն ամեն մի քայլափոխում խիստ կերպով զգայնել են տալիս այդ բոլորի զոյսութիւնը: Եւ կապիտալիստական կազմակերպութիւնն այսօր ժողովրդի ահագին բնդհանրութեան անտեսական ճարտութեան վրայ է հիմնված: Վնչին վորք բամանութիւնն իր շահերի թեւոյրութեամբ ի շարն է գործ գնում ժողովրդի բանոց բնդհանրութեան ոյմն ու ջրտ ձեռները ե նրանց էքսպլոատացիա անելով, միշտ նրանց պահում է աղքատ գրութեան մէջ, բաջ գիտնալով, որ ընդհանրութեան աղքատութիւնն է միակ պատուանդանն իր, առանձնաձայնված փորքամանութեան, անիրաւ ձգտումների ու շահերի, իր բարձր ու տարհովմ գոծ գիրքի ու գրութեան, իր սեփական հարստութեան, որ քանակ է բանոց ժողովրդից: Այդպիսի անտեսական սովխարչ գրութեան մէջ են այսօր եւրոպական ժողովուրդները: Հայ ժողովուրդը, որ գրանց եան իցն է բնութանում, անցնելով վերջին ժամանակներն ու այժմ այն Փաղխները, որ փաղուց ի վեր անցել են նրանք, վաղ թէ ուշ կարոց է հասնել այն անիրաւ անտեսական գրութեան, որ այսօր Եւրոպայումն է թագաւորում: Բայց հայ ժողովրդին կարելի է ե պէտք է փրկել, կարելի է ե պէտք է նախագողտացնել այդ թշուտա պ է ր ո պ է կ տ ի վ ա յ ի յ (perspective): Պիտի հասարակութեան զիտակցական մասը կանխապէս ջնքն ու հարկաւ որ միջոցներ գործ գնէ այն զալիք թշուտութիւնների առաջն ստանկու համար, դնելով հայ ժողովրդի անտեսական գարդացմաւ քայլերը ն պ ա տ ա կ ա յ ա ր մ ա ր ճ անապարհների վրայ: Թէ որքնք են այդ ճանապարհները, այսօր նոյն Եւրոպան իր կապիտալիստական գրութիւնից գրգ

ված մեզ ցոյց է տալիս: Նա մեզ նրանց ցոյց է տալիս գիտնական հիմններով գործութեամբ, առաջացնելով մի նոր հասարակական գիտութիւն — ս օ ջ ի ա լ ի զ մ ը: Զգտելով հասարակութեան ու ճշմարտութեան սկզբունքների վրայ հիմնել մարդկութեան անտեսական կեանքը, նոյն սկզբունքների գործութեամբ սօցիալիզմը ձգտում է բարեկարգել մարդկութեան քաղաքական կայութիւնն էլ: Այսինքն, սօցիալիզմն այն ուսումն է, որ կոչված է կատարելապէս բարեկարգելու մարդկութեան ամբողջ սօցիալական կայութիւնը: Սօցիալիզմը յայտնվում է գրական ու արդարագատ վճիռն այն սօցիալ-տնտեսական ու քաղաքական կնճառտ խնդիրների ու երեւոյթների, որ այսօր մարդկութեան ամեն անտես թշուտութիւնների, անբարեկարգութեան, թշնամութեան պատճառներն են: Եւրոպական առաջողված տարրերն այսօր սօցիալիզմ գաստնողներ են ե ներկայումս նրանք ձգտում են իրողութիւն Եւրոպայում սօցիալիստական կազմակերպութիւնը: Եւրոպական ժողովուրդներն անցնելով կեանքի զարգացման զանազան փաղխներ, իրերի ընթացքի գործութեամբ բնական կերպով եկել հասել են այդ կէտին, սօցիալիզմին, ե նրանք հասել են սօցիալիզմին կապիտալիստական արդիւնագործութեան շրջանից, Փաղխից յետոյ: Այդ Փաղխի մէջ հայ ժողովուրդը դեռ չէ մտնել ե եթէ վաղ թէ ուշ նա այդ քայլն էլ անէ, դա կլինի, բայց ուրիշ ներքին պատճառներից, նոյնպէս եւրոպական արդիւնագործութեան ազդեցութեան շորհով: Բայց դա դեռ չէ նշանակում, որ հայ ժողովուրդն անպատճառ պիտի անցնէ եւրոպական կապիտալիստական արդիւնագործութեան փաղխը, ինչպէս նա անցել է եւրոպական ժողովուրդների անտեսական կայութեան մի քանի նախկին Փաղխները: Եւրոպական ժողովուրդների այժման անտեսական թշուտ վիճակն ու գրապատճառները մեզ, հայերիս, համար հանդիսանում են զեղեցիկ պատու խրատ: Այժմ խիել եւրոպական ժողովուրդների ներկայ թշուտութիւնների առջև, որ առաջացրել է կ ա պ ի տ ա լ ի զ մ ը (capitalisme), — մեզ ներելի չէ: Աջակցել այդ կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մէջ, քանի որ եւրոպական ժողովուրդների առաջողված գործիչները տեսնելով ու ապացուցելով նրա, կապիտալիզմի, բոլոր մեծամեծ շարիքները, աշխատում ու գործում են այսօր կործանել նրա անիրաւ բէժիմի կարգերը՝ յանուն սօցիալիզմի, աջակցել, ասում եմ, կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մէջ, — յանցանք է: Այսօր մեր առջև կայ մի գիտութիւն, որ մեզ ներկայացնում է այն սօցիալ-անտեսական կազմակերպութիւնը, որ կարող է մի կողմից առաջն առնել կապիտալիզմի զարգացմանը հայ ժողովրդի մէջ, մի ե նոյն ժամանակ միւս կողմից հայ ժողովրդին կարող է գնել այնպիսի սօցիալ-տնտեսական բարեկարգ պայմանների հողի վրայ, որ նա ամեն այն ազատութեամբ կարող կլինի լիակողմանի ու իրաւասօր կերպով զարգանալ: Սօցիալիզմի գիտնական արտայայտութիւնն է այն սօցիալական, այն ժողովրդային յեղափոխութեան, որ պէտք է ժողովրդի ձեռքը գցել:

քաղաքական կառավարութեան ղեկը, զնելով գրոն ամենալայն ասովակալական քաղաքական ազատութեան պայմանների մէջ, և այդ ղեկի օգնութեամբ ու միջոցով արդիւնագործութեան բոլոր եղած ու լինելի միջոցները, երթեկութեան յարմարութիւնները, — այսինքն՝ հողը, գործարանները, մեքենաները, գործիքները, երկաթուղին, շոգեկուտը և այլն, որ այսօր անհատական, կամ զանազան վաճառականական ու աւելցնեցական ընկերութիւնների սեփականութիւններ են, — դարձնէ հասարակական սեփականութիւն, հաւաքական սեփականութիւն Կրանով վերջ կրնալէ բարձր ու ցածր, ունեւոր ու ազքատ դասակարգերի գոյութեանը, դասակարգեր, որոնք ներկայումս գոյութիւն ունեն այն պայմանի շնորհով, որ արդիւնագործութեան միջոցները, հետեւորար և դրանց արդիւնքի ամբողջ հարստութիւնը, յայտնաբերմ են մենաշնորհ սեփականութիւն առանձնաշնորհակա՞մ դասակարգի, որ կազմում է մի շնչին փոքրամասնութիւն իսկ ժողովրդային ահագին ընդհանրութիւնը, շնորհով իր թէ՛ քաղաքականապէս իրաւաւորի և թէ՛ անտեսակա, նուազէս ազքատ լինելուն, հանդիսանում է այդ առանձնաշնորհակա՞մ դասակարգի ճորաբանութիւն ու կերակրողը Այդ անկրաւ պայմանը ծառայում է իբրև ազրւբ գունգան դասակարգերի թնամութեան գէպ իրար, մարդկային հասարակութիւնների անդամների մէջ գոյութիւն ունեցող քաղաքական ու սոցիալ-անտեսական անհաւասարութեան, որտեղից և առաջնաւ են ամենայն շարիքներ Բարեկարգելով մարդկութեան գոյութեան հիւրը — անտեսական յարաբերութիւններն ու կեանքը, սոցիալիզմը մարդկային ողջ սոցիալական յարաբերութիւնները պար է հիմնէ նոյնպէս խերացի, արգար ու համերաշխ սկզբունքների վրայ Կոյալիստական կազմակերպութիւնն ամենաբարձր ու կարարեալ կերպն է մարդկային հանրակեցութեան — Բացի մինչ այժմ ասած բարբ հիմքերից, որոնց գորութեամբ սոցիալիստական զագտարներն ու նպատակների իրականացումը Հայաստանում յայտնաւում է անհրաժեշտ յանան ժողովրդի բարօրութեան ու զարգացման, սոցիալիզմն իր իրականացման համար ունի և որից զրական հիմք հայ ժողովրդի մէջ Բայանի է հայ գիւղական համայնական, կոմունական կարգերը, հողատիրութեան կոմունական կերպերը: Հին ժամանակներից ժառանգած այդ մեծ հարստութիւնը գիւղական համայնքը կոչված է ապագայում մեծ դեր խաղալու հայ ժողովրդի բարօրութեան գործում, ստանալով իր այժմեան ձև ու կարգերից անհամեմատ բայն, անհամեմատ կատարելագործված կերպարանք: Եթէ մի կողմից արհեստարների համայնքները Հայաստանում արագարար կործանում են, գա, ինչպէս վերն ապացուցեցի, մէկ յայտնի կողմից բանում է Հայաստանի գոնեք սոցիալիզմի աջակց Բայց միև կողմից, ընդհակառակը, հայ գիւղական համայնքները ստանում են ատանել բայն ու ընդարձակ ծառայ և գրանտի նմանապէս աւելի բայնարձակ կերպով բանում հայ ժողովրդի կարգերը սոցիալիզմի հանդէպ: Շնորհով կառավարութեան անազրւմ կամայականութեան

և անօրէն ու անարգել կեղեքումների. շնորհով ուղղակի ու անուղղակի հարկերի գծաբարտանելի ծանրութեան և այլն գոյնանման պայմանների, — այդ բոլորի շնորհով է, որ հայ գիւղական համայնքներն աւելի ու աւելի են ընդարձակվում իրենց ծառայականութեամբ Անհատ գիւղացի սեփականատէրը մենակ անկարող է լինում գիւղանալ կառավարութեան կեղեքումներին ու ծանր հարկերին Կամ կառավարութիւնն է հարկերի փոխարէն ի վերջոյ գիւղացուց խում հողը, կամ այս վերջինը կեղեքումների, հարստահարութիւնների ու հարկերի շնորհով պարտաւորված է լինում ձգել իր հողն ու զագթել հետաւոր երկիրներ՝ որից գործով իր ու իր ընտանիքի ապրուստը հայթայթելու և կամ անհատական ուժով շկարադանալով դիմանալ վերաշխած հարուստներին, նա մի ահա ու մէկ գոյութիւն ունեցող գիւղական համայնքի հետ, իր հասարակութեան և լուրջ սեփական ու թիւն այդ համայնքի Կարգաւոր, իր կացութեան ներկայ պայմաններում անհատ գիւղացի հողատէրն որից միջոց շունի դիմանալու կառավարութեան հարստահարութիւնների կամայականութեան առջև, եթէ ոչ նոյն իսկ իր շահերի տեսակէտից, միմիայն միանալ համայնքին, սա աւելի դիմացկուն լինելով, իբրև հաւաքական ոյժ: Այդպիսի միացման երեւոյթներ ներկայումս Հայաստանում պատահական երեւոյթների թուում չեն արդէն Կարանց յաճախակի փորձերը վաղ թէ ուշ կարող են հանգել այն կէտին (ինչպէս այսօր իսկ տեղ-տեղ երևում է), որ մի քանի ու աւելի շատ գիւղեր միանգամայն կկառմեն մէկ ընդհանուր համայնք: Բարբովին տարբեր ազրւբից աստձնաբով, այդ երեւոյթը, այսինքն՝ անհատական սեփականութեան գործնելը սեփականութիւն համայնքի, յայտնաւում է ամենահատուտ հիմք սոցիալիզմի ամենազրւբուր պահանջի աջգոպի իրագործման — դարձնել հասարական, հաւաքական, հանրաժողովրդային սեփականարկն արգիւնազրւբութեան ամենանպաստար գործիքներից մկր՝ հողը: Այդ երեւոյթի մէջ արդէն կան հիմունքները համայն ժողովրդային կոմունական անտեսական կեանքի ու կարգերի, որ սոցիալիզմը ներկայացնում է մեկ իր ամենա կատարելագործված կերպարանքով Հայաստանում սոցիալիզմն այդ կողմից կարող է յայտնալել ժողովրդի իրձերի ու ձգաումների համապատասխան մի կացութեան կերպ — Այս բոլորը ներկայացնելուց յետոյ՝ եզրակացնեմ աստձներս Այսպէս, մենք տեսանք, որ հայ ժողովուրդը երօպական ժողովուրդների հետ ունի օրգանական կապ Կենք տեսանք նոյնպէս, որ հայ ժողովուրդն անցել ու անցնում է այն անտեսական Փաղիաներից մի քանիսը, որ նրանից առաջ անցել են երօպական ժողովուրդները: Կենք նոյնպէս տեսանք, որ հայ ժողովրդի մէջ արդէն նշմարվում են նոյնները անտեսական մի նոր Փաղիան, որ, եթէ առաջը չաւնալէ նպատակաշարմար միջոցներով, վաղ թէ ուշ երևան կգայ կատարելապէս և վերջ ի վերջոյ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին ազդեցութիւնից առաջ կերբէ անտեսական հարստութեան կապիտալիզացիա

(capitalisation), արդիւնադործութեան այն սխառեմը, որ պատահեց Է կապիտալիզմի Ա.Յ. ֆազիսի անիրաւութիւնները, թշուառութիւնները, վնասակարութիւնը ժողովրդային բանաւոր ընդհանրութեան համար՝ եւ ձեռք կարճ կերպով ներկայացրին խօսեցի նմանապէս սօցիալիզմի մասին, որ կանխապէս արգելք դառնալով կապիտալիզմի չարիքներին հայ ժողովրդին մէջ նրա քաղաքական ու սօցիալ-անտեսական կեցութիւնը կամփոխէ նպատակայարմար ու բարեկարգ պայմաններին սահմաններում, նարտառելով նրա մարդկային նպատակի իրադարձմանը, նրա բոլոր կարողութիւնների ու ընդունակութիւնների լիակազմանի ու կատարեալ զարգացմանը: Բայց այդ բոլորից, եւ նոյնպէս սակայնուցից, որ հայ ժողովրդին ընտանի լինելով թէ՛ արհեստարների եւ թէ՛ զիւզական համայնքների կարգերն ու ընդհանուր կեանքը, նրան դժուար չի լինել ընդունել ու հասկանալ սօցիալիզմը, որ համայնական կեանքի ամենակատարելագործված ու զրանական հիմունքների վրայ հաստատված կերպն է: Ա.Յ. կէտի հիման վրայ էլ սօցիալիստական կազմակերպութիւնն իր հաստատութեան համար ոչ դժուարութեամբ հոգ կզանէ մեր ժողովրդին մէջ, որ նրան համակրելով եւ տեսնելով նրանում իր խնայելիքներին սրաշարժութիւնը, կաջակցել սօցիալիստներին այդ կազմակերպութեան իրադարձման համար մղված պատերազմումն — Ա.Յ. մեզ պարզ է թէ ինչու եմ եւ սօցիալիստ յեղափոխական, թէ ինչու եմ եւ հայ ժողովրդական սօցիալիստ յեղափոխական:

Խ ա զ ա յ ա ս ո ջ ա գ ի մ ա կ ա ն . — Ա.Յ. ամենը շատ բաւ: Չեր քաղաքական գաւառներով դուք սօցիալիստ էք եւ աշխատում էք զիւնականօրէն բացաւրել թէ ինչ հոգի վրայ է կարող պատաստավել ու զարգանայ սօցիալիզմը հայ ժողովրդին մէջ: Գուք ուզում էք ապացուցանել, որ նա ունի օրինաւոր հիմքեր դրա համար եւ որ հայ սօցիալիստների գործունէութեան ֆորձով մեր ժողովարդը կյայտնով ընդունակ ու արամաղիքի ձեռք հետ միասին սօցիալիստական կազմակերպութիւն հաստատելու Հայաստանում: Գուք համոզված էք, որ հայ ժողովուրդն էլ կոչված է մասնակցելու այն «մեծ սօցիալական պատերազմին», ինչպէս ասում էք դուք, որ Էրօպոյում, բունուր ժողովրդի կարգերը մտած եւ նրա հետ միասին, մղում են սօցիալիստներին ընդդէմ իրերի ներկայ վիճակի, ընդդէմ ներկայ հասարակական կարգ ու կանոններին: Եր խօսքով, դուք, սօցիալիստներու, ուզում էք կերպարանափոխել, կործանել ներկայ բոլոր կարգ ու կանոնները եւ նրանց տեղը հաստատել մի նոր կազմակերպութիւն մարդկային հանրակերպութեան, մի նոր մարդկային աշխարհ: Երբան այդ բոլորը ճշմարիտ ու գործնական է՝ եւ յանձն չեմ անում քննադատել թէ՛ օրինակի կողմից, կարող եմ խտտովանել, որ ճշմարտութիւն կայ իսկ թէ, որքան դա ճիշդ է գործնական տեսակէտից, դա մեզ կապալուցանեն հայ սօցիալիստներին իրենց պրակտիկական գործունէութեամբ, եթէ մի կողմից՝ այդ գործունէութեան համար նրանք կարողանան

մեր երիտասարդ ինտելիգէնցիալի մէջ առաջացնել զիտակցական սօցիալիստներ, որ հեշտ բան չէ, եթէ ճիշդ է մեր առաջադէմների շրջաններում տարածված կարծիքը, թէ հայերի մէջ պահպանողական ոգին շատ զարգացած է, եւ եթէ միս կողմից՝ դուք, սօցիալիստներդ, ու ջողէք ձեր այժմեան զխաւոր աշխատութիւնը, այսինքն աջողէք ստեղծել մէկ ընդարձակ ու զօրեղ կազմակերպութիւն զիտակցական սօցիալիստներու, որի մասին ստեղծ դուք խօսել էք հետո: Բայց թողնելով այդ բոլորը մի կողմ, եւ դարձեալ առաջարկում եմ ձեզ այն հարցը, որ արդէն մէկ անգամ ասացի: Սօցիալիստական կայմակերպութեան հաստատութիւնը Հայաստանում, իմ կարծիքով, ապագայի ինչիք է: Մինչդեռ հէնց այսօր հայ ժողովրդի դրութիւնն աննախանձելի է եւ ամեն մի հայի սրտում, լինի նա յեղափոխական, թէ խաղաղ առաջադիմական, այն միտքն է յղանում թէ այսպէս կամ այնպէս՝ պէտք է թեթեւցնել նրա դրութիւնը: Նրա սյուսուրայ վիճակը գտն է եւ մենք պիտի ձեռք դարձնենք այնպիսի միջոցների, որոնք գործնական են եւ որոնք նրան թոյլ կտան փորքին ազատ շունչ բաշել: Չեք, իբրև համոզված յեղափոխականի, եւ չեմ կարող համոզել, որ ներկայ պայմաններում խաղաղ առաջադիմական միջոցներն են գործադրելի ամենայարմար ճանապարհը: Բայց դուք, իբրև յեղափոխական, ինչու այսօր չէք ուզում այն ուղղութեամբ աշխատել, որ հայ ժողովարդը ձեռք բերէ այնպիսի քաղաքական ինքնուրոյնութիւն, օրինակ, ինչպիսին ունի Բոլշաքիան: Գա աւելի գործնական ու դիւրամտ չեղի կլինի, քան հաստատել Հայաստանում այն ժողովրդային հանրային կառավարութիւնը՝ աստիճանական քաղաքական ազատութեան պայմաններում սահմանված, որ ձեր մտակայ նպատակն է: Աւելի գործնական նպատակ ցոյց տամ ձեզ . — Գուք, հէնց իբրև յեղափոխականներ, ինչու չէք ուզում գործել ՅԼԲԳ յօդուածի գործադրութեան համար թէ՛ եւ ձերանց մէջ տարածված կարծիք կայ, որ այդ յօդուածն ինքն ըստ ինքեան այնչափ ազբատ եւ մի եւ նոյն ժամանակ մութ խօսքերով խտտումներ է անում, այնչափ անընդունակ է բուարարութիւն տալ հայ ժողովրդի ամենակարեւոր պահանջներին ու կարիքներին, որ այդ յօդուածի գործադրութեան համար յեղափոխական պիտի կազմել այդ պիտիքը յետոյ կորցնել, արիւն թափել, ժողովրդին ստի կանգնեցնել եւ հազարաւոր զոհեր առաջացնել . — այդ բոլորը միանգամայն խեղազարութիւն եւ մինչև իսկ թերեւ յանցանք է . — թէ՛ այդ կարծիքը ձերանց մէջ տարածված է, բայց եւ չեմ կարող շատել, որ ՅԼԲԳ յօդուածն այսպէս թէ այնպէս, գործեալ մինչև մի յայտնի ստորժամ կրարեկարգէ հայ ժողովրդի վիճակը, թէ՛ կազմէ հէնց նրանով որ կառավարութեան դատկիւնն սրի փայլը քիչ կնսեմացնէ եւ վայրենի դեղերի յարձակումները կնախադրու շարժել: Չեր յեղափոխական գործունէութիւնը, իմ կարծիքով, թէ՛ կազմէ նոյն իսկ այդպիսի հոգի վրայ գնելը աւելի գործնական կլինի: Առաջարկելով ձեզ այս հարցերը, եւ միայն մտադիր եմ պարզել ինձի ձեր ծրագրի մի բանի կէտերը: Ինչ

քըս անձնապէս, ինչպէս ձեզ յայտնի է, դէմ եմ յեղափոխական ձգտումներին և թէ ինչ հիմունքների զօրութեամբ — ես դա ձեզ կատարեմ իր ժամանակին

Ս օ ց ի ա լ ի ո ս . յ հ ղ ա ի օ խ ա կ ա ն . — Դուք, իբրև ճշմարիտ խաղաղ առաջադիմական, որ այսօր հայ ժողովրդի կուլտուրական խաղաղ առաջադիմութեան մասին է երազում և զրամով սնվում, աշխատում էք նուստուսնել յեղափոխութեան նշանակութիւնը: Այդ հարցերն ինձ ուղղելով, դուք ապացուցանում էք, որ անտես էք թողնում, որ մինչև իսկ մտածում էք սօցիալիստ յեղափոխականներիս նպատակը: Ամենից առաջ մենք սօցիալիստ ենք և իբրև այդպիսիներ, մենք իսկապէս ունենք մի նպատակ: Դա այն է, ինչ որ մեր ծրագրում կոչված է «հեռուոր նպատակ», այսինքն սօցիալիստական կազմակերպութեան հաստատութիւն Հայաստանու իսկապէս, ասում եմ, դո՛ւ է մեր նպատակը: Եւ մեր ծրագրի մնացած կէտերը, սկսած այն կէտից, որ կոչված է «մտակայ նպատակ», — այսինքն ընդարձակ սոսկկապեաական քաղաքական ազատութիւն թ. Հայաստանում և ազգային անկախութիւն, — մինչև վերջին կէտն ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ մի ջոցն և ր հասնելու մի նպատակին: Եւ ունենալով իբրև նպատակ սօցիալիստական կազմակերպութեան հաստատութիւն Հայաստանում, լիովին տրամաբանական է, որ մեր ամբողջ գործնական ծրագրերը պէտք է խստօրէն կանոնաւորվէ ու կազմվէ յսկ մեր նպատակի անսակկտից ու զօրութեամբ, յսկ մեր նպատակի իրագործման ծառայէ: Մի նշանուոր կէտ, որ մենք ըմբռնել ենք, մէկ անհրաժեշտ պարտականութիւն, որ մենք կատարել ենք: Եւ եթէ այսօր, թիւրքահայ ժողովրդի ներկայ գրութեան միջոցին, մենք ասարբէղ ենք գորս գալիս որպէս յեղափոխականներ, դա հենց այն պատճառով, որ նախ և առաջ մենք սօցիալիստ ենք: Եւ այդ ճշտանապով, դուք մեզ առաջարկում էք մի կողմ չարտել մեր սօցիալիզմը և գործել այնպիսի մի բանի իրագործման համար, որ ուղղակի վնասակար ու հակառակ է մեր նպատակին . — դուք մեզ առաջարկում էք արիւն վօթել, ապստամբել ընդդէմ կատախարութեան Հայաստանից ստեղծելու համար մի երկրորդ իշխանական բռնակալութեան լուծը կրող Բօլշեւիստ Քայց արգեօք դրան ենք ձգտում մենք, սօցիալիստ յեղափոխականներս: Արգեօք այդպիսի մի քայլ կարող է համարվել մի մի ջոց մեր նպատակի իրագործման նպաստող: Մի՞թէ կարծում էք, որ լոկ ազգային ambition-ի թելը գրութեամբ, լոկ ազգային սնտիառութեամբ ենք գրոված, որ մենք, սօցիալիստ յեղափոխականներս, ձգտում ենք ձեռք բերել հայ ազգային անկախութիւնը: Մի՞թէ կարծում էք, որ մենք ձգտում ենք թիւրքիայից դատվել հենց սրբպապէս նրա համար, որ թիւրքերը թիւրքեր են ու թիւրքիան էլ թիւրքերինը, իսկ մենք հայեր ենք և ուզում ենք Հայաստանն էլ մերը լինի: Մի՞թէ կարծում էք, որ մենք կուրացած ենք թթու ազգասիրութեամբ, նեղբակայեաց ն ա ց ի օ ն ա լ ի զ ճ ո վ (nationalisme): Եւ ինչ ազէս և ըսազ, թիւրք սուլթանից ազատվել մի նոր հայ սուլթան

մեր զլխին կանգնելու համար . . . Քայց ինչ՞ է պէտք հայերիս քաղաքական ինքնաբոյնութիւն, ազգային անկախութիւն, եթէ դարձեալ անհատ կատարելիչ, — լինի նա իշխան թէ թագաւոր, — պիտի ճանաչվէ տէր հայ ժողովրդի և նրա ճակատագրի միակ վճատու: Գա չի՞ լինի մի՞թէ նոյն սուլթանական բռնակալութիւնը, լոկ այն դանազանութեամբ, որ այդ բռնակալութիւնը, սոցիալական հողի վրայ: Եւ այդ քայն անկալ արդեօք հայ ժողովրդին չենք ստիպել յարգել ու սիրել բռնակալութեան կորստարեր, աւերիչ ու հակաժողովրդային սկզբունքը, փոխադրելով այդ սկզբունքը հայկական հողի վրայ, — յարգել ու սիրել մի սկզբունք, դէպի սբը, շնորհով սուլթանների բռնակալութեան, հարածու մեծիկին, հարստահարութիւններին, հայ ժողովուրդն այսօր զգում է միայն ստեղծութիւն և որից ազատվել նրա միակ իղձն է: Վերջիցս քայն անկալ արդեօք մենք չենք գործել բան ժողովրդի շահերի պէ, սբնց մտախ հոգալ, յանուն որոնց գործել մեր սուրբ պարտականութիւնն է: Այդ քայն անկալ արդեօք մենք չենք յայտնվել գործակիցներ հայ բռնաորների, պաշտպաններ հակաժողովրդային ձգտումների, թշտամբներ իսկ հայ ժողովրդի: Նայեցէք տեղի խորը Թողովրդի բանուր ընդհանրութեան բարօրութիւնն ու կամքը և այդ բարօրութեան իրագործումն ու այդ կամքի կատարելու աղաւտ արտայայտութիւնը — մեր երգոված երկու անխախտելի սկզբունքներն են: Եւ ինչ էք կարծում, մի՞թէ կարող են այդ երկու սուրբ սկզբունքները գործնական հանդիսանալ մէկ այնպիսի հայկական բէժիմում, որտեղ ժողովրդի պետք, կատարելիցը ոչ թէ ժողովուրդին ինքն է, ալ մէկ անհատ է: Իշխան թէ թագաւոր: Այդպիսի անհատական բէժիմի սկզբունքի իր իրագործութեամբ գործադրվելու համար՝ արդեօք կարող է իրեն բարբառվին հակառակ վերայիցս երկու սկզբունքներին գործադրութեանը ևս տեղ տալ բռնակալար, դա անհնարին է: Իրար հակառակ սկզբունքներ անկարող են միաժամանակ գործադրվել, — դա պարզ է: Արեւմտ ձգակով Հայաստանից ստեղծել մի երկրորդ Բօլշեւիստ, ինչպէս դուք էք խորհուրդ տալիս, հաստատելով մէկ անհատական բէժիմ մեր երկրում, մենք, սօցիալիստ յեղափոխականներս, ուղղակի կհանդիսանանք հակառակարգներ ժողովրդային բանուր ընդհանրութեան շահերի ու բարօրութեան, որեւմն և մեր նպատակի, ձեռք ձեռքի տված ժողովրդի գահիճների հետ միասին: Այն, այդ անկալ, մենք էլ կյայտնվենք գահիճներ հայ ժողովրդի, դաւաճաններ ժողովրդական մեծ գործի, սրահեաւ մեզ քաջ յայտնի է, որ միմիայն հանրային ժողովրդային կատարելութեան սխալմը ժողովրդին միջոց կապ աղաւտ կերպով արտայայտելու իր կամքը, կատարելու ու լիազօր իրուումը ունենալու միջամտել, բննել ու վճել երկրի բոլոր կատարելական գործերը, ամենայն աղաւտութեամբ ջանալու իրագործել հանրային շահերի պահանջները, ձգտելու հաստատել սօցիալիստական հանրակցութիւն, որով որեւմն և երազ չի մնալ բոլոր հանրութեան

կառարևույ ու լիակազմանի բարբորութիւնն ու զարգացումը իսկ անհատական կառավարութեան հաստատութիւնը Հայաստանում, — ինչ կերպարանք էլ ունենայ այդ անհատական կառավարութիւնը, — հայ ժողովրդի զլխին կառավարչնէ մեծամեծ թշուառութիւններ՝ թէ նրա քաղաքական և թէ անասական կեցութեան վերաբերութեամբ: Անհատական կառավարութեան կերպերը, որպէս էլ նրանք լինեն, հիմնովում են քաղաքականագէտ ժողովրդի անձայն խնայարթեան, հլու հպարտութեան, նրա կառնի բնարարութեան, նրա պահանջների անուշադրութեան ու ճշման սկզբունքների վրայ, իսկ անասականագէտ՝ հիմնովում են նրա ճորտութեան վրայ, զիջելով նրա զլխին ամեն անասկ հարկեր, զնելով նրա աշխատութիւնը նոյն իրեն ժողովրդի բարեկեցութեան համար ամենամեղարմոր պոյնանների մէջ: Անհատական կառավարութեան սկզբունքներին հաստատելով մտաբ, նրանց պահպանութիւնն ու զործագրութիւնը նկարագրածիս պէս են պահանջուի Այրապէս նա ինքն իրեն կհասցնէ մահացու հարստու: Բայցի այդ ամենից, անհատական կառավարութիւնը հաստատելով, իր շահերի անասկէ ախց և իր անհատական գերիխանութիւնն ամբողջութեամբ, բոյնարձակ կերպով բաց կանէ Հայաստանի զաները կառավարութեան արգիւնուդործութեան, կապիտալիզմի առջև, մինչդեռ այդ անելով նոյն իսկ իր իրազօրութիւնն ասուել հաստատ հիմնունքների վրայ զնելու համար, նա հայ ժողովրդային բանուր ընդհանրութեան համար կանեղձ անասական ամենամտանիլի ճորտութեան զարագրուի: Եւ այլ կերպ չէ կարող լինել, քանի որ միակ սոցիալիզմն է, որ կարող է ժողովրդին փրկել կապիտալիզմի աւերիչ ազդեցութիւնից: միակ սոցիալիզմն է, որ կարող է նախազգուշացնել, մի կողմ հրել կապիտալիստական թագաւորութիւնը հայ ժողովրդի վերաբերութեամբ, միանգամայն թէ՛ առաջն ամենով կապիտալիզմի ծնունդ պրոյկտարիատի զարգացումը հայ ժողովրդի մէջ և թէ՛ այդ ժողովրդի անասական կեցութիւնն ամբողջով սոցիալիստական կազմակերպութեան կերպերի մէջ: Եւ չէ՞ որ մեր, սոցիալիստներին, ամենայնպէս որ հողներից մէկն է, ինչպէս մեր խօսակցութեան սկիզբը բացատրելի, նախազգուշացնել հայ ժողովրդին, կապիտալիզմի ախտից, առաջն ամենով Հայաստանում այդ ախտի մուտք զործելուն, որ ասեղձիլով երկրում հազարաւոր, միլիոնաւոր բանուր ապրատներ, պրոյկտարիատ գատակարր, կյանքնէ գրան շնչին փարքամանութիւն կազմող ասանձաւորհամ, կապիտալիստ գատակարրի անգուսղ կամեղականութեան, կը զարձնէ գրան մահու ճիրանների գոհ, որի սակոյններից կազմած ահագին արիւնաթաթախ աշտարակի վրայ կծածանով կապիտալիզմի անիծված գրգռիչ վրան հետեւեղ հրեղէն բասերով: — «Արքայութիւն ունեւորների և զմիւր շունքների»: Արքայ գրան ենք ձգտում մենք, սոցիալիստ յեղափոխականներ: Իսկ այդ բոյրն անպատճառ սղգպէս կլինի, եթէ վաղը Հայաստանում մենք անենանք անհատական կառավարութիւն, անհատ կառավարիչ: Արի

նախները մեր առջև են: Արքայութեամ, Բոլշարիստում սղսօր սկսել է մուտք զործել այդ կառավարիչը, որին, բոլշար ու սերը սոցիալիստները, յեղափոխականներն սղգային անկախութիւն ձեռք բերելու, չեն մտածել կամ չեն կարողացել նախազգուշացնել, ընկնելով անհատական կառավարութեան երկաթէ՛ ձնչոյ ձեռք տակ, իսխարէն հաստատելու հանրային ժողովրդային կառավարութիւն առանց իշխանի կամ թագաւորի: Եթէ սերը ու բոլշար յեղափոխականներն սղգային անկախութիւն ձեռք բերելիս՝ չեն կարողացել արգելք լինել ոչ անհատական կառավարութեան հաստատութեան և ոչ գրան հետեղ կառավարիչով մուտք զործելուն իրենց երկրում, — գրան պատճառ են եղել անշուշտ և այն հանգամանքները, որոնց միջոցին նրանք ձեռք են բերել իրենց ինքնուրոյնութիւնը, բայց գրան պատճառ է եղել և այն, որ նրանք այն ժամանակ չեն անեղել սոցիալիստ յեղափոխական զորեղ կուսակցութիւն: Այդ կուսակցութիւնը կարող կլինէր զործել յօրուտ հանրային ժողովրդային կառավարութեան հաստատութեան իրենց երկրում բնոյգէմ անհատական կառավարութեան, որով և կարելի կլինէր սոցիալիստ միջոցների ձեռք զարնել, որ միազամայն արգելելով կապիտալիզմի մուտք զործելը երկրի ներսը, ժողովրդի աշխատութիւնը կզնէր նոյն իր, բանուր ընդհանրութեան, շահերին օգուտ պայմանների հոյի վրայ: Բոլշարիստ այդ շարեց, նա ինչ հիմն է ու գում անել այդ իր սոցիալիստների զործունէութեամբ, բայց միթէ՛ գրանից պէտք է հետեւեցնել, որ մենք էլ չի պիտի անենք: Եւ զուր մեղ, սոցիալիստ յեղափոխականներին, ստաճարկում էր զործել Հայաստանից երկրորդ Բոլշարիստ ասեղձելու, ինչ է թէ ունենանք մեր հայկական սղգային անկախութիւնը: Ինչ ծայր... Աչ, այդպիսի սղգութիւն տայ հայկական յեղափոխութեան մենք չենք համաձայնիլ: Կարձեղ իրբ հայ ժողովրդական սոցիալիստ յեղափոխականներ, զարձեղ սոցիալիստական սկզբունքների գործութեամբ, զարձեղ յանուն մեր նպատակի իրազօրծման, մենք գէմ ենք սղգային անկախութիւն ձեռք բերելուն պարզապէս սղգային անկախութիւն ձեռք բերելու համար, այն էլ տալով գրան անհատական կառավարութեան կերպարանք, ինչպէս զուր էք ստաճարկում գէմ ենք, համարելով գա փտտակար ժողովրդի իսկական շահերին, ծայրահեղ կերպով անհաշտ ու հակառակ մեր սկզբունքներին ու համարումներին և անգործն ա կ ա ն, ոչ պր ա կ ա ի կ ա կ ա ն և նոյն իսկ նոր արգելք մեր նպատակի իրազօրծման համար:

Խ ա գ ա ղ \_ ա ա ջ ա գ ի մ ա կ ա ն . — Բայց գիտէ՛ք, որ զուր գէմ էք սոցիալիստ մի բանի, որի իրազօրծման այսօր գիտակցարար թէ՛ անգիտակցարար ըղձում է ամեն մի հայ, լինի նա ինտելլիգէնտ թէ՛ միակ, լինի նա համակրող յեղափոխականների թէ՛ խողող առաջադի մականների: — զուր գէմ էք հայոց սղգային անկախութեան Բայց մի և նոյն ժամանակ եւ ձեղ յիշեցում եմ, որ զուր հակառում էք ձեր, սոցիալիստ յեղափոխականներից, ծր ա գ ի ն, որակց սղգային անկախութեան:

պահանջին դուք տալիս էք առաջնական, ակամաոր տեղ ու մեծ նշանակութիւն Գէմ' լինելով հայոց ազգային անկախութեան, դուք կմեայնէք հայի մէջ այն ձգտումները, որ կոչված են նրան տանելու դէպի փրկութիւն: Այդպիսի գաղափարներով հասարակական ասպարէզ դուրս գալով, դուք, սօցիալիստ յեղափոխականներդ, սպասում էք մինչև անգամ կործանել այն, ինչ տասնեակ տարիների ընթացքում աճել ու զարգացել է թէ՛ հայ ինտելլիգենտի և թէ՛ հայ բամբակի հոգու մէջ: Հարկաւ, ես բոլորովին չեմ կասկածում, որ ձեր գիտաորութիւններում դուք անկեղծ էք և անկեղծարար ձգտում էք գործել հայ ժողովրդի բարօրութեան համար: Բայց ձեր թէօրիաներն ու ձեր ուղղութիւնը սխալ են, ես ձեզ նախազգուշացնում եմ:

Սօցիալիստ յեղափոխական. — Ահա դուք արդէն տարանում էք և ձեզ հանդատացնելու համար հենց սկզբից յայտնում եմ, որ ես ամենին չեմ հակառակում մեր ծրագրին, այլ ընդհակառակը, դուք էք սխալվում, վատ ըմբռնած լինելով մեր ծրագրի այն կէտը, որ վերաբերում է ազգային անկախութեան Բացատրեմ' ձեզ: Վիզյուներս'դ, այն, մենք դէմ ենք ազգերի նորանոր բաժանման, նորանոր անջատման, հետեւարար և ազգային անկախութեան (տրեմն բաժանման) ձգտումների այն ազգերի մէջ, որոնք այսօր իրար հետ խառն ունեն թէ իրենց կեանքը, թէ իրենց ինտելեկտները, թէ իրենց կուլտուրան: Մարդկային զանազան բանող ու զարգացած հասարակութիւնները, ազգերն առաջադիմութեան, սոսցալիստիկ էվոլյուցիա (e volution) օրէնքի զօրութեամբ բնական կերպով, ինքն ըստ ինքեան դիմում են դէպի միութիւն: Ազգերը, մարդկութեան այդ բաժանումները զանազան խմբերի, արդիւնք են նախապատմական ժամանակների, այն վաղեմի ժամանակների, երբ մարդկային կեանքում ամեն բան կարգադրվում ու կանոնաւորվում էր ուսվարութիւն և ներքին ազգայնութեամբ: ու գործութեամբ: Այն ցեղերը, որ յայտնվում էին արիւղ ցեղերից աւելի զարգացած՝ ձորհով աւազական այն պայմանների, որոնք նրանց կեանքը կազմում էին արիւղ ցեղերի կեանքից տարբեր կերպով հանդիսանում էին իրեն զարգանքի, յայթաղներ իրենցից աւելի վայրենի ցեղերի: Այս վերջիններն իրենց պայութեամբ կապվելով յայթաղների հետ, պայութեան համար պատերազմելու զօրութեամբ՝ պարտաւորված էին յարմարվել իրենց նոր կայսրութեան, իրենց կեանքի նոր կերպերին: Նոր կրօն, նոր բարբառ, նոր օրէնքներ, նոր հանրակեցութիւն, նոր սովորութիւններ, բոլոր նրանք պարաւարված ընդանում էին, բոլորը նրանց աւելի էր կապում, աւելի միացնում յայթաղ ցեղերի հետ, որոնց հետ ի վերջոյ նրանք կազմում էին մէկ ամբողջութիւն: Այսպէս կամայ կամայ կազմվում էին զանազան ազգեր: Աճում էր ժամանակը, նրա հետ միասին մէկ ազգ կանամ էր մէկ արիւղ ազգ, և վերջապէս գալիս են սոցալիստական ժամանակները՝ մեզի ծանօթ ազգութիւններով, որոնք գրեթէ ամենքն աւելի վերջ ընկել անհետացել են: Աճում էր ժամանակը, փոփոխվում, ընկնում և կրկին

աճում էին ազգեր և դրանց հետ միասին աճում էր և մարդկային մտքի վաստակը: Մի կողմից, կրօնները գնալով տարածվում էին: Մոսկուէսը, Մուհամմէտը, Քրիստոսն իրենց աշակերտներին ու զարկում են աշխարհիս ամենայն կողմերն իրենց վարդապետութիւնները քարոզելու համար: Մի և նոյն կրօնը միաժամանակ սկսում են դաւանել մի քանի գոմազան ազգեր, այդպիսով իրարից տարբեր, երբեմն մինչև իսկ միմեանց թշուար մի ազգերն իրենց կրօնական հայեցողութեամբ յայտնվում են համերաշխ: Միւս կողմից զանազան ազգերի իրար հետ շփվելուն նպաստում էր զօրեղ կերպով և աւետուրը, որ փրկելիկէցիներին մղում էր դէպի հետաւոր երկիրներ օտար ազգերի վաճառանոցները: Ազգերը, երկար ժամանակ միմեանց խորթ ու թշուարի մնացած, սկսում են այդպիսով իրար հետ շփվել, ծագում են նրանց մէջ ընդհանուր պահանջներ, ընդհանուր իզգներ ու շահեր: Յարաբերութիւնների աւելի սոստատնալը, աւելի յաճախակի գաւնալը, հետաքրքրութիւնը դէպ իրար, սոստուրը պատերազմները խառնում են իրար հետ տարբեր ազգերին, որ փոխադարձաբար միմեանց միաց ազգում են, փոխադարձաբար ընդօրինակում, իրացնում են իրենց այլ և այլ սովորութիւնները, յատկութիւնները: Ազգերի նախկին բաժանումը սկսում է խախտվել: Զանազան ազգերի գիտնականների անունները փոխադրվում են հանրամարդկային գիտութեան մի և նոյն արձանի վրայ: Նրանց մտքի վաստակը գաւնում է միաժամանակ բոլոր զարգացած ազգերին օժիտ ու կատի: Դէկապիլը յայտնվում է մուսուր ու բնական սրանչիլի զարգ Ամբիկայում ու Անգլիայում, Ռուսիայում ու հայերիս մէջ: Հանձարները գաւնում են ուսուցիչներ բոլոր զարգացած ազգերի համար հաւասարապէս: Միջազգային տնտեսական մտտական յարաբերութիւնները, միջազգային աւետարական ընկերութիւնների սերտ կապակցութիւնն իրար հետ ու կախումը միմեանցից և այն՝ երկրապետիս բոլորը չուրջը ցանում են շոգենաճների ահագին թիւ, երկաթուղու շոգենաճներով կործանում և բէնիւսորդ ու մեկուսացած պետութեան շինական պարիսպները: Մարդկային բոլոր յարաբերութիւններն ընդունում են աւելի ու աւելի սուր կերպով կօսմօպօլիտական (cosmopolite) կերպարանք: Աւ զարգացած մարդկութեանը դէպի միացում տանող այդ բնական պրօցէսից յետոյ, ինչպէս շատել մի նշանաւոր ուսումնասէր (penseur) սօցիալիստ յեղափոխականի հետ միասին հետեւողը. — «Ազգերի տանձնութիւնը, անջատութիւնը դարձել է անհնարին: Նրանց բաժանումը, անջատութիւնն յայտնվում է զլիտարապէս իրեն հնապարհան կեանքի հետքեր, մանաւանդ նախապատմական շրջանից մնացած: Նրաբիւ՞ և միթէ կարծել, որ սուրապայում այդ պրօցէսը կիտիվէ: Միթէ մարդկութեան անդադար աճող միացումը, որ ընթանում էր թէ՛ օրհասական, արիւնհաճու ընդհարումներ իրար վրայով թէ՛ մի ցեղը միւսին, մէկ ազգը միւսին էքսպլոատացիա անելով, թէ՛ ճամարութիւնն ու համերաշխութիւնն աւելի ու աւելի գիտակցական դարցնող ու միւս

ընդարձակվող ուղիի միայնով, կանգ կառնէ և կպահպանէ ժառանգած բարբառները, ընդունված կուլտուրաների մի յայտնի աստիճան տարբերութիւններն իրար մէջ: Միթէ այդ միացումը ողջ զարգացած մարդկութեան չի հասցնիլ մինչ այն աստիճանը, երբ նա իրենից կկազմէ մէկ ամբողջութիւն, մարդկութեան, որն այդ գրութեան հասած իր կեանքի կերպերով միմիայն կզանազանվէ այնչափ, որչափ զա պահանջում է զոնազան մայրերի մտաւոր ատղջապահութիւնը (hygiène rationnelle) և ոչ երբէք աւանդական սովորութիւնները. մարդկութեան, որի անդամներն ամեն բան իրար մէջ կհասկանան, խօսելով միայն երկու երեք համալիրացային լեզու, մասնազէտ լեզուաբաններին թողնելով ուսումնասիրել կարծանված գրականութիւններն ու բարբառները, անհետացած սեղանական սովորութիւնները, որ առաջ զանազանել էին ազգութիւններին իրարից. մարդկութեան, որ կմտանայ ամեն նախկին թշնամութիւններն ու սեփական ազգութեանը ոլորմանը կերպով զովասանքներ ուղղելով միւս ազգութիւններին հակառակ. մարդկութեան, որ ամեն ազգութիւնների հերաներով կհաղտանայ Հինց նոյնպէս, որպէս այսօրուան ֆրանսիացին հարաւանում է մեծ մարդերով բոլոր քաղաքների Հին Պրանսիայի, երբ այդ երկրի գաւառների ու ֆեոդալական անհատներին մէջ գեւ տիրում էր թշնամութիւնը. — միթէ այդ միացումը (զեւ որ բնական կերպով ընթանում է այժմ մարդկութիւնը) ողջ զարգացած մարդկութեան, ասում եմ, չի հասցնիլ մինչ այն աստիճանը, երբ նա իրենից կկազմէ մէկ ամբողջութիւն: — Ես կարծում եմ, որ զա կկատարվէ և այլ կերպ ենթադրելը կլինէր կատարելապէս հակառակ պատմութեան ընդհանուր ընթացքին: — Մինչև հիմա ես ձեզ բացատրեցի թէ ինչու և ինչպէս ենք սկզբունքով գէտ ազգային անկախութեան, որինն ազգութիւնների նորանոր անջատման նորանոր գաւառներ, որ ինքն ըստ ինքեան հակառակ է առաջադիմութեան օրէնքին, հետեւապէս և նորանոր գծաւորութիւններ ատղջայնուց է «զարգացած մարդկութեան մէկ ամբողջութիւն» կազմելու ընթացքի ստիճաբայց հատարակական կեանքում պատահում են այնպիսի պայմաններ, այնպիսի հանգամանքներ, երբ նոյն իսկ յանուն առաջադիմութեան պրակտիկական գործունէութեան մէջ խեղդող շեղումներ առաջադիմական ընդհանուր ընթացքից յայտնվում են անհրաժեշտ, անխուսափելի երբեմն: Այդպիսի պայմանի մէջ է այսօր հայ ազգը, և թիւրքաշուք ժողովրդի գրութեան բարեբաւման վերաբերութեամբ պրակտիկական գործունէութեան մէջ մենք պաշտպան ենք նրա ազգային անկախութեան այնչափ, որչափ այդ ազգային անկախութիւնը յայտնվում է մէկ անհրաժեշտ միջոց, մէկ անխուսափելի պայման մեր նպատակի իրագործման համար: Ես ահա ինչպէս . . .

Խ ա ղ ա ղ ա ու ջ ա ղ ա ղ ա կ ա ն. — Բայց սկզբունքով գէտ լինելով մեր ազգային անկախութեան, իրեն ազգերի նորանոր անջատման, և ներկայացնելով «գար

գացած մարդկութեան միացման» թէօրիան, չէ՞ որ Հինց այդ հիման վրայ դուք նմանապէս հանդիսանում էք հայ լեզուի, գրականութեան զարգացման էլ հակառակ:

Ս օ ջ ի ա լ ի ս ա յ Ե ղ ա ղ ա ղ ա կ ա ն. — Ամենին: Ես ձեզ կարող եմ հաւատացնել, որ սխաղվում էք: Գուք մտանում էք, որ եթէ ապագայում թէ՛ հայոց լեզուն և թէ՛ հայկական գրականութիւնը զառնալու էլ լինեն արխիվների փոշիի պաշար, որի մէջ ուսումնասիրութեան համար կթաղվէ հեռաքրքիր ուր զ՝ ապագայ մասնագէտ լեզուագէտը, զա տակաին չէ նշանակում, որ այսօր և գեւ երկար ժամանակ հեռուոր ապագայում, նոյն իսկ յանուն հայ ժողովրդի մարդկային առաջադիմութեան ու զարգացման, մենք սրտտուոր չենք դրա համար նրան մատակարարել կուլտուրական ամենապայն պաշար այն լեզուով ու գրականութեամբ, որով այսօր նա խօսում է և որով այսօր նա կրթվում է, և որոնց նա կկործանէ գեւ երկար ժամանակ մինչ հեռուոր ապագան . . . Բայնկանութիւն տալով ձեր հարցին ու դուր վրդովման, ես շարունակում եմ խօսքս: — Ես ասացի, որ թիւրքաշուք ժողովրդի գրութեան բարեբաւման վերաբերութեամբ պրակտիկական գործունէութեան մէջ, մենք, սօցիալիստիկափոխականներս, այսօր պաշտպան ենք նրա ազգային անկախութեան այնչափ, որչափ այդ ազգային անկախութիւնը յայտնվում է մէկ անհրաժեշտ միջոց, մէկ անխուսափելի պայման մեր նպատակի իրագործման համար: Ես ահա ինչպէս . . .

(Կարծանակով):

Հ Ա Յ Ո Յ Կ Ե Ա Ն Ք Ը

Այս անգամ հայոց կեանքում մենք պիտի խօսենք զը. Լարճաի հարցերի մասին: Սակայն չկարծէք, որ գրանով ուզում ենք ասել թէ՛ հայոց կեանքը վերջին ժամանակներն այնքան ուրախ ու ծիծաղկոտ է եղել, որ մեզ զը. Լարճութիւն պատճառեց: Ահ, ոչ: Աստահում է երբեմն, որ մարդ որ և է անախտ ընդհանր կամ պատահարից բարձրութիւն զգալով, բարկութեան յատուկ կերպով չէ կարողանում արտայայտել իր այդ զգացումը, այլ ծիծաղում է և ծիծաղում է զայրացյալ ծիծաղով և մի և նոյն ժամանակ բարկութիւնից արտասվում: Մեր խօսքը Հինց այդպիսի զուարճութեան մասին է, Հինց այդպիսի զուարճութիւն են մեզ պատճառել հայոց կեանքում պատահած վերջին մի շարք սնցերը:

Սկսենք սնցեալ տարուայ վերջերից: «Արև ելքի» անցեալ տարուայ 28 նոյեմբերի թուով գեոեղվեցաւ մէկ առաջնորդող Եւրօպայում գանուղ հոյ անօրինական հրատարակութիւնների ու նրանց հրատարակիչների գէտ: Եթէ «Արև ելքի» խմբադիրները բաւականացած լինէին տիտական կուլտուրիւններով և ողջա ու վտակոտ բառախաղութիւններով մեր գէտ — մենք չէինք խօսիլ նրանց մասին, նախ այն պատճառով, որ իրենց

ոճն ու շեղան արդէն բաւականաչափ ստորացնում են նրանց և երկրորդ՝ այն պատճառով, որ մենք բոլորովին չենք յարգում ոչ նրանց և ոչ նրանց կարծիքը:

Իսկ նրանք մեր վերաբերութեամբ շրտականացան լոկ առիական հրատարակչներով ու իրենց ազիտութեամբ: Նրանք զործածեցին մեր դէմ այնպիսի քաղաքկամած ակնաբեկներ, այնպիսի դրաւարատիւններ, որոնց կտրելի է անուանել սասր ու ցածր, և զրանով նրանք ջանացին սխալ ճանաչելի վրա դնել Հասարակական կարծիքը, հայտնիան բարին իրբե չար նրա ներկայացնելով, միանգամայն ստերի, միանգամայն շարաչար մեղան չեղով ճշմարտութեան գէմ: Կա անբարոյականութիւն է: Կենք մեր պարտականութիւնն ենք համարում հրատարակչական գաւառիս հանդէպ, որ ընդունակ են կատարել միայն այնպիսի մարդիկ, որոնք փառաց սփոր են տաճկական կեղծատարութեամբ ու երեսպաշտութեամբ շղկ սուլթանների ոտները:

«Այդ հրատարակչութիւններ, — գրում է «Արևիկը», — իբր թէ հայոց Ազգին կազմէ խտեղի թիւրքից կառավարութիւնը կը քննադատեն: Հրատարակչիք կը լուսան կղեր պատկէս Ազգին շահուն ծառայելու հարկ է սուկայն որ խնաման թէ Ազգին ծառայելու շատ տարօրինակ միջոց մը հնարած են: Թէ իրենց հրատարակչութիւնը, բաւ օգուտ մը չունենայէն զատ, մեծամեծ փաստներ կուտան Ազգին և իւր թանկագին շահերուն»:

Կենք ինչ կարատեսանեն «Արևիկը» խմբագիրները, եթէ մենք ստենք նրանց, որ ձեր այդ ազգերում նայն խոկ ինքներդ ձեր հրատարակչութեան պատկերն էք ներկայացնում: Թո՛ղ ասան մեզ այդ պաշտները թէ արդեօր ազգը նրանց յանձնարարել է ամենատղեղ կերպով յարձակել այն ազատ խօսքի գէմ, որ յանուն ժողովրդային շահերի քաջութիւն է ունեցել տաճիկ կառավարութեան նայն ազգի վրայ զործադրած անիրաւ ու բարբարոս բռնութիւնները երեսն հանել հրատարակչական, որ արդարացի զայրայթով ու զղուսմբով պակել է գիճակն «Արևիկը» խմբագիրներին պէս անձերի գէմքից, որոնք ստարանաբով բարձրատիւնան էֆֆէկտիւնների ստղև ու շահագրտական տեսակետից, ամենայն ներքի ու աններքի միջոցներ են զործ գնում վարագուրի տակ ծածկել թիւրք կառավարութեան ու սուլթանի վայրենի հարձուները, հարստահարութիւնները, բռնութիւնները հայ ժողովրդի վերաբերութեամբ: «Ազգի թանկագին շահերին միծամեծ փաստներ» տուղն, սերեմն, սկրեթր են, պարտներ, գուր թէ մենք:

«Տաճկական կուրտուրայի» ազգեցութեան տակ մեծացած «Արևիկը» խմբագիրներին ազիտութիւնն այնչափ է համարում, որ նրանք մեղադրում են մեզ թէ «օտարաշը պատակ» ու երազականացեալ» հայերը թող թիւրքաշարատակ հայերի զործում շխտանվեն: Տղէտներ, գուր նախատում էք մեզ, որ մենք հայ ենք, որ մենք չենք գաւառանում հայերին միմեանցից ում հարատակ էք որ նրանք լինեն և որ միակերպ անկեղծութեամբ ու անաչաւ սուլթանը քննադատում ենք որպէս սուս, որպէս պար-

սիկ, նայնպէս և թիւրք կառավարութիւնների վայրենութիւնները, բարբարոսութիւնները, ճշտմենին ու մ'ր ուղջ հայ ազգին վերաբերութեամբ: Չլինե՞ թէ ձեր ազգապարզամտութեամբ կարծում էք, որ թիւրքաշար ճողովրդի զրութեան մասին մասեղաւ, խտեղաւ ու գրեղա իրաւանք միմայն գուր ունէք և ուրիշ ու մի հայ:

Կրաւիած իրենց հաստական արամարանութեամբ «Արևիկը» խմբագիրներն ազգում են մեր հասցելին հետեւեալը. — «Անկեղծութիւնը» կը պաշտնջէ քեզ թէ ամենին ազգատիրութիւն չէ, մարդատիրութիւն չէ, քաջութիւն այ չէ, այլ ընդհակառակն է: Հանդիսա նաակ օտար երկիրներու մէջ, պատասխանատու թէ նէ բարբովին զերծ վիճակի մէջ, և յիմարական յիմարը հաստացած է, որ ամենքի մէջ միակ խեղճի ինքն է, հրատարակչութիւններ քեզ, որք Ազգին տանք կը կարծանեն, որք թիւրքից մէջ բնակեալ հաստաւրիմ հայ ժողովուրդը նշտակ կրենն անխտտհոթեան, և այդ անխտտհոթեան առթած ամեն կարգի հետեւնայ:

Հին, փաստ նախատներ, ողորմիկ՝ տարեկութիւն: Կուր նախատում էք մեզ, որ ազատ խօսքը հեշեցնելու համար մենք նրա արդար բարբարոս կարգաւից ենք խուսում ձեր սիրելի կառավարութեան և ձեր գէմքին: Իսկ ինչ էք կարծում, ազատ խօսքն արդեօր կարո՞ղ ենք այսօր հեշեցնել թիւրքիցում: Ճշմարտութեան արշապան հրատարակչական արդեօր կարո՞ղ ենք հանդիսանալ թիւրքիցում: այդ գէղարում արդեօր թիւրքը մեզ չի՞ խեղճել ճշմարտութեան խօսքը չի՞սլլ տարով մեր կոկորդից գարազայ. բայց չէ՞ որ պիտի տակ այդ խօսքը. կառավարութեան ճշտմենը երեսն հանել կարո՞ղ ենք արդեօր թիւրքիցում: պարզել ու պաշել ժողովրդի գրութիւնը և այդ զրութեան բարեկաման ինդիկներն ու միջոցները կարո՞ղ ենք արդեօր ձեր պաշտած սուլթանի հովանա տակ: Կյանդգնէք միթէ, ասել թէ՛ այն, կարելի է Վախկաւներ, գուր գոգում էք կառավարութեան ստղև և ձեր քաջութիւնը նրանով է արտայայտում, որ սուլթանի ապտակը ձեր գէմքին՝ գուր «Կորին Վեհախառութեան աշարքութեան արձանի» լինենուց նշան էք համարում, որ սուլթանը թրամ է ձեր պատրիարքի երեսին, գուր ասում էք թէ՛ «Վեհախառ» ամպտակ է և անձրե է գալիս նրա բերտից, նրան «չի պիտի դրդեղ»): Եթէ գաճիտ չէ, եթէ գուր վախկաւ չէք, հապա ինչո՞ւ չէք յայտնում այն ճշմարտութիւնը, որ հայ ժողովուրդը խեղճում է թիւրքի ըմ տակ: Կուր չէք կարող այդ ճշմարտութիւնն տակ, ազատ խօսքը թիւրքիցում տաղալովել չէ կարող: Կակայն գուր կասէք, որ ճմարտութիւնն այն չէ թէ՛ հայ ժողովուրդը «սուլթանի հովանա տակ ամենաբարեկարգ» գրութեան մէջ է: Կանում էք, կեղծաւորներ, վախկաններ: Կուր գուր այդու հետեւ կյանդգնում էք մեզ նախատել թէ ճշմարիտ ու ազատ խօսքը մենք կը բողաւիցն ենք հեշեցնում: Հապա ինչո՞ւ գուր թիւրքիցում չէք ասում մեզի պէս, եթէ ձեր արշապած սուլթանն այնչափ «հայրական զորտալովութիւն» ունի գէղի հայ ժողովուր-

դչ և ցանկանում է նրա բարին: Հապա ինչպէս եղաւ, որ այդ «Հայրախնամ» սուլթանը զրաքննական օրէնքներն իդիտարար խտտացրեց, որի դէմ արանջում էիք դուք ինքներդ: Եւ դուք մեզ նախատում էք, որ մենք չենք ուզում ճանաչել սուլթանական վայրենի օրէնքները: Թող այդպէս լինի, բայց սցնուամենայնիւ ազատ խօսքը Եւրօպայից դողացնում է և կարօնակէ դողացնել ձեր «Հայրագործ» ու փառք սուլթանին և ձեզ նմաններին, նրա սարսկ ազգամիտներ, խօսելով ձեր դէմքին ճշմարտութեան անողոք գատավճիտը: Բայց ինչ կաէք դուք այն օրը, որ հետու չէ, երբ այդ ազատ խօսքը հնչէ ձեր քթի տակին, ինչ մեղադրանքներ պիտի ուղղէք նրա հնչեցնողներին . . . .

«Արեւելքի» խմբագիրներն այն ատիժանի են հասել որ իրենց «Հայրագործ» ու փառապանք ինքնակալի» ներշնչմամբ ու հրամանով արտարատ են ստար վարվել ոչ միայն մեր վերաբերութեամբ, որ ցամաքում է միայն իրենց, այլ և ստորաբարձ գրգարատ թիւններ անել Հայ ժողովրդի դժգոյ մներն ու գրութեան վրայ, ստախտել սուլթանի վերաբերութեան մասին զէպ այդ ժողովուրդը: Գծրաղջարար, տեղը մեզ չէ ներում ներկայացնել ընթերցողներին «Արեւելքի» խմբագիրների ստրկական լեզուն ու սքին, նրանց գրգարատ թիւնները: Կարճ կերպով կարող ենք ստաջ բերել նրանց խօսքերից հետեւեալը. — «Հայք միշտ մեծաւ պարծանօք կը հաչակեն թէ իրենց վայելած բարիքները կը պարտին Ասմ. Պահան բարեբար հովանւոյն, և տակէ կարն ալ իրենց կոյուրթեան ամեն բարեբար և ամեն նորանոր բարիք Վեհ. Սուլթանին հայրական իշխանութեան ներքէ միայն կրնան վայելել արեւու լոյսին պէս փայլող հաւատարմութեամբ»:

Պըրմելլինի՛ր, դուք, որ ինքնակոչարար ձեզ հոչակում էք ներկայացուցիչ Հայ ժողովրդի, չէք ամաչում ձեր հրէշաւոր ստախտութիւններից, գրգարատ թիւններից: Զեր ստոր ու անիրաւ յարձակումներով Հայ ժողովուրդը բարեկեց չի լինել և մեզ էլ չէք լեցնել բայց նայեցէք ձեր ներքը, դիմեցէք ձեր խղճին, եթէ նրան չէք միացրել արդէն, — արգեօք չէք կարծում դուք ինքներդ ձեզինց»:

Բայց հայկական ազատ մամուլը խորին սուգ է պատճառում ու վախ ներշնչում ոչ միայն վերոյիշած պարսկաներին, այլ և խորէն պատրիարքին, այլ և սուլթանին: Սրա հրամանով Խրէնը զլուխը կորցրած՝ անցեալ աւրուայ գեկաններ ամսին ստար ու մի և նոյն ժամանակ ծաղրելի չըջարեականով դիմում է Լօնդօնի, Մարսէլի Հայ գաղթականութիւններին հոգեւոր գլուխներին, հրաւրելով գրանց կատարել հետեւեալը. 1) տեղական Հայ հասարակութեան քարոզել իրենց հետու պահէն «գաղթակղիշ» հրատարակութիւններից, 2) դիմումներ անել գրանց հրատարակիչներին, խորհուրդ տալով դադարեցնել իրենց հրատարակութիւնները և 3) հակառակ դէպքում, երբ այդ դիմումներն ազարդիւն մնան, Եւրօպական տեղական կառավարութեան միջոցով խափանել տալ նրանց: Տգէ՛տ պատրիարք, նա մեզ ծիծաղեցնում է. նա մինչև անգամ անտեղեակ է որ իր «ամենարարեբար» սուլթանը

թէև կարող է դիւթական զօրութիւն ունենալ իրեն, պատրիարքի, վրայ, բայց նա բոլորովն անհշանակ է ոչ միայն օտար կառավարութիւնների համար՝ որ սրանք փոխէին մամուլի ազատութեան իրենց օրէնքներն, այլ և մեզ համար: Պատրիարքի այդ միջոցի անաջողութիւնը փայլուն էր:

Սակայն «Ջրում լեզգվազը շօխիցն էլ է բռնում», ասում է ժողովուրդը: Կառավարութիւնը հայկական ազատ մամուլի իրեն պատճառած վախից չդիտնալով ինչ անել նախագօշակելով իր մօտաքստ անկումը, խելագարվում է: Նա վճռել է հարածել, ոչնչացնել հայկական ազատ մամուլը և աղերսում է Հայ անբարոյականացած չըջաններին ամակցութիւնն այդ գործում:

Եւ ահա այսօր Պարտիզակի քարոզիչ Եղիշէ վարդապետ Գուրեանը, պատրիարքի հրամանով ճանապարհորդ դումէ Եւրօպայում: Բարի՛ գալուստ ենք նրան մողթում. կառավարութեան առջև մեջք ծառ հայ չըջանների անտաւորված մթնաբախից դուքս դալ և մի պապա անել Եւրօպայում օգախօսութեան համար՝ շատ ատղջարար է: Բայց ախտո՛ս, որ մեր վարդապետը գալիս է մեզ հիւր ոչ այդ նպատակով և սպասում է թունաօրից իր ճանապարհորդութեան արտօքը: Նրա «ազգաչա՛» աւաքելութեան նպատակը միանգամայն թէ՛ նշանաւոր թէ՛ տարօրինակ և թէ՛ ծաղրական է. — պատրիարքի հրամանով նա գալիս է փրկելու Հայ ժողովրդին հայկական ազատ մամուլի «աղգամիսա աղգեցութիւնից, մեծ ամեծ միտաներից» և այն Նա Եւրօպայի Հայ գաղթականութիւններին պիտի քարոզէ դգուշանալ ազատ մամուլից և ազատօնիքին պիտի համայնէ հետեւել խորէնի. «Արեւելքի» խմբագիրների ու գրանց նմանների օրթնակին և գտնալ ստախտներ: Բայց խեղճ Գուրեան, Եւրօպայի գաները նրա առջև բացվելուն պէս՝ առաջնապէս Բօրգարիտի հայերի կողմից նա ստացաւ ծաղր, արհամարհանք, նախատինք, թշնամական ցոյցեր: Սմեռայն անկողնութեամբ մենք նրան խորհուրդ ենք տալիս օգալիլ այդ գտնից և խեղդն և նիթ նահանջիլ ու ներկայանալով պատրիարքին, յայտնել նրան թէ՛ Եւրօպայի հայերը ծիծաղում են թէ՛ Գուրեանի «աւաքելութեան» և թէ՛ նրա աւաքողի վրայ, որի խելքը միայն գաւազան անան հարցերով ու ստորութիւններով է ընդունակ դրազլել միանգամայն արհամարհելով Մշտ սովը, Վանի աղբատութիւնը, քիւրդերի աւերումները և այլն, որ ներկայումս շարձարում ու մահացնում են Հայ ժողովրդին:

Բայց վերջապէս հարցնում ենք. — սուլթանը, պատրիարքը, Ա. ր և Ե. ր ի խմբագիրներին նման անձերը կատաղարար հարածելով հայկական ազատ մամուլն ու նրանց հրատարակիչներին և նիթաղբներ անողներով նոյն խիլ լեցնել նրանց, — կարծում են նրանք արգեօք, որ գրանուխ իրաւաւ կոչնչացնեն հայերի ազատական ձգտումները, Հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-անտեսական բարեկարգութեան պահանջները, կարծում են, որ գրանուխ սուլթանի խախտված գազը հաստատուն հողի վրայ կգնեն, խելգելով նրա ծանրութեան տակ Հայ ժողովրդին:

մի խօսքով, կարծում են դրանով հասնել իրենց նպատակին: Մեթե նրանք չգիտեն, որ այսօրուայ հայ ազատ մամուլը ոչնչացնելով, նրանք չեն կարող ոչնչացնել մեծ գաղափարը, որ միշտ կրկին ու կրկին կծագեցնէ նոր ազատ մամուլ: Մեթե նրանք չգիտեն, որ լսեցնելով ու հարածելով ազատ մամուլում այսօր դործողներին, նրանք դրանով չեն կարող արգելք լինել ուրիշ դործողներին երևան գալուն, որոնք թուով մեր մէջ քիչ չեն և որոնց թիւը կշարունակվէ միշտ աճել մեծ գաղափարի ազդեցութեամբ: Եթէ նրանց աջողվէ էլ մեծ գաղափարի դործնական արտայայտութիւններն ու արտայայտողներին խնայեն, կարգել, ոչնչացնել, — դա նրանց երբէք չի հասցնիլ իրենց նպատակին, որովհետև մի ծուղորդի մէջ մէկ անգամ ծագած առմարմինն մեծ գաղափարը չէ կարելի ոչնչացնել և նա շարունակ կարտադրէ նրանոր գործնական արտայայտութիւններն ու կառավարչէ նոր արտայայտիչներ իր կռիւնում, նա շարունակ կ'մարմնանայ, մինչև որ ի վերջոյ յաղթանակը կտանէ, և յաղթանակը նա՛ կտանէ անպատճառ, որովհետև նա ճշմարտութեան ու ազատութեան գաղափարն է:

**ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այն բաղկին, երբ տարագրութեան էր յանձնվում Հ ը ն չ ա կ ի վերջին շարուածքը, մենք ստացանք Մարտիկ հրատարակիչը Ա. ր մ է ն ի ա լրագրի վերջին համարները: Կարգալով նրանց, մենք հարկ համարեցինք հէնց այս համարում, որքան տեղը մեզ ներում է, պատասխանել Ա. ր մ է ն ի ա ի ն, որտեղ առաջնորդում նրա խըմբազիրը յայտնում է մի քանի մտթ, անհարթ ու սխալ կարծիքներ Հ ն չ ա կ ի մասին: Ա. ր մ է ն ի ա ի մի քանի մանրակրկիտ անկնարկներին մեր գեմ մենք չենք պատասխանիլ: մենք բնաւ իրատեսք չտանք մեր անձով և պանազան մանրակրկիտութիւններով պրայեցնել հասարակութեանը:

Կեր ընթերցողներին յայտնի է, որ Հ ն չ ա կ ի անցնալ տարուայ № 12. ի մէջ «Մէկ առաջարկութիւն» վերնագրով յօդուածում մենք գրեցինք հայ անօրինական հրատարակիչներին, հրա իրելով նրանց հետեւել Հ ն չ ա կ ի օրինակին և ներկայացնել վերջապէս հայկական յեղափոխութեան նկատմամբ իրեց ուղղութիւնն ու ծրագիրը, որ անյայտ է հատարակութեանը: Կեր հրաւերին մի քանի ամիս յետոյ վերջապէս պատասխան տուց Ա. ր մ է ն ի ա ն, տարագրելով թէև ոչ յեղափոխական գործունէութեան մի ծրագիր, այլ մի շարք առաջնորդներ՝ «Կեր ուղղութիւն» վերնագրով: Բայց հակասակ այդ երկար յօդուածներին նպատակին՝ որտից ցուով պիտի

յայտանք, որ մենք նրանցից էլ չիմացանք և սակաւին չգիտենք թէ՛ սրն է Ա. ր մ է ն ի ա լ ուղղութիւնը, թէ՛ կուզ նրա խմբագրին անդադար սնդէ էլ թէ՛ հասարակութեանը «յայտնի» է այդ իր վերայից մի շարք առաջնորդներին մի մասն Ա. ր մ է ն ի ա լ խմբագիրը նը: Երբում է իր յօդուածներին նպատակին չծառայել գտաւ զութիւններին, իսկ միտում անյարարար աչքի տակով ու գրչի ծայրով է անցնում Հ ն չ ա կ ի ու Հ ա յ ա ս ա ն ի ուղղութիւններն ու ծրագրիները: Ա. յապէս որ այդ բոլորից յետոյ էլ այսօր էլ ինչպէս և երկէկ, տակաւին չէ պարզված և չէ կարելի որոշել թէ Ա. ր մ է ն ի ա ն ինչ ուղղութիւն տնի:

Խօսելով Հ ն չ ա կ ի ուղղութեան ու Մ ր ա գ ի ի մասին, Ա. ր մ է ն ի ա լ խմբագիրը, — զիտակցարար թէ անգիտակցարար՝ դա մենք թողնում ենք նոյն իրեն որոշելը — խեղաթիւրում է մեր Մ ր ա գ ի ի ը և կիսաշափ կերպով առաջ բերում լոկ նրա մի կէտը, բարբոթին անտես թողնելով Մ ր ա գ ի ի բոլոր մտացած կէտերը: Երնականաբար, յօդուածագիրն այդ անկելով, պարտաւորված է ասել այնպիսի անհեթիթութիւններ, որ միանգամայն սպառնացնում են նրա մասեր խախտութիւնը: Եւ մասամբ էլ այդ բոլորն առաջանում է նրանից, որ պիտի խմբագիրը երբէք իրեն լրջօրէն հարց չէ տուել թէ սր պիտի բնաւ որութիւն պիտի կրէ, սր պիտի կերպարանքով պիտի արտայայտվէ, սր պիտի նպատակներով պիտի զեկախարվէ հայկական յեղափոխութիւնը: Ահնայայտ է, որ յեղափոխութեան գաղափարը նա ոչ միայն չէ իւրացրել այլ և բոլորովին իրեն հաշիւ չէ տուել թէ ինչն է նրան մղում բարեկար յեղափոխութիւն անել, յենելով այդ ինչը մի կողմից գիտութեան, միւս կողմից դրական հոգի վրայ: Եւ ահա Ա. ր մ է ն ի ա լ խմբագիրը պիտի բանելով մեր մ'օ տ ա կ ա յ ն պ ա տ ա կ ի կէտից, այն էլ առաջ բերելով նրա միմիայն մի կէտը (ընդարձակ անկախական յազարական ազատութիւն) և մի խօսքով իսկ շփշիւրվ մեր մ'օ տ ա կ ա յ ն պ ա տ ա կ ի միւս կէտի մասին (ազգային անկախութիւն), կէտեր, որոնք խաղաղ մի կէտ են կազմում և միմեանցից բաժանել չէ կարելի մեր Մ ր ա գ ի ի արամագրութեան գործութեանը, — այդ տարօրինակ կերպարանափոխութիւնն անկելով, տաւում ենք, Ա. ր մ է ն ի ա լ խմբագիրն ինքն իր գլխից բաներ է հնարում ու սարքում և իր հնարած անհեթիթութիւնները մեզ վերագրելով, ջրում Ս ա գ գ ը թ ու ա ղ ի տ ա տ թ իւ ն չ է՝ այդպիսի քննադատութեանը, բայց և նախանձելի չէ, և միմիային երևան է հանում քննադատի անկարգութիւնը՝ լինել տեք քննելի խնդիրներին: Եւ հէնց այդպիսի երևելի արամագրութեամբ ու եղախակով Ա. ր մ է ն ի ա լ խմբագիրը յիշում է մեր սօցիալիզմը (ընկերակարականութիւն), միանգամայն համարելով թէ մեր մ'օ տ ա կ ա յ ն պ ա տ ա կ ը և թէ մեր սօցիալիզմն աւելորդ «մանրամասնութիւններ», որոնց մասին նա յիշել մինչ անգամ «հարկ չէ համարում»: Ետտ հը սձապարտում ձեր veto-ն ասելու, պիտի խմբագիրը Այսպէս թէ սցնակէս, այդ հարցերը յարուցված են և սցսօր նրանք

ունեն աւելի շատ պաշտպաններ հայերիս մէջ քան զուր  
կարծում էք, և հայկական ժողովրդական գործով իւրա-  
քանչիւր, մանաւանդ հրատարակապէս զբաղողը պար-  
տասուր է չբօքէն ու մանրամասնաբար իրեն հաշիւ տալ  
այդ հարցերի նկատմամբ և այնպէս նրանց վճռել հիմնա-  
ւորապէս՝ յանուն զ ս ր ծ ի Հ ն չ ա կ ի այդ յարուցած  
հարցերը, միակ սրանք կարող են լինել հայ ժողովրդա-  
կան ու յեզախտական գործի նպատակներ, զիս նրանից  
առաջ ծագեցրել են հայ ժողովրդի կեանքն ու մարդկա-  
յին առաջադիմութեան օրէնքը և եթէ դուք, խմբագիր,  
այդ չէք նկատել, մեր մեղքը չէ՝ իսկ եթէ դուք այդ  
մտքին համաձայն չէք, ցանկալի կլինէր, որ այդպիսի  
լուրջ հարցերին լրջութեամբ վերաբերվէք, ապացու-  
ցանէիք, հաստատաբար հիմնաւորապէս ու գիտնականօրէն  
ձեր կարծիքը, փոխարէն հաշտելու նրանց իբրև «ման  
բամանութիւններ», իբրև աւելորդ հիմնական համար  
և այլն։ Յայտնի է, որ ձեր օրգանում չէ եղել ոչ ասակապէ-  
տական քաղաքական ազատութեան հիմունքների վրայ հաս-  
տատված ազգային անկախութեան միտքը և ոչ էլ սօցիա-  
լիզմի հոսանքանցում հայ ժողովրդի վերաբերութեամբ  
Գա մի խոշոր պահատութիւն է հայ յեզախտական  
թէօրէտիկական ասպարիզում գործող անձի համար, մի  
պահատութիւն, որ ասպարցանում է թէ այն անձը պատ-  
րաստականութիւն չունի իր ընտրած ասպարիզում գոր-  
ծելու, ինչ սակայ կարող է չցանկացած ազգեցութիւն  
ունենալ զ ս ր ծ ի պարզացման ու աջարութեան վրայ,  
— բայց ունենալ այդ խոշոր պահատութիւնը յանցանք չէ՝  
Եւ եթէ մէկ ուրիշը, նոյն ասպարիզում գործող անձ,  
նկատում ու յարուցանում է վերաբերված հարցերը՝ ինչո՞ւ  
առանց որոնց քննելու, առանց վճռելու, առանց հաս-  
տատութեան գոչել թէ այդ հարցերը մանրամասնութիւն-  
ներ են, պէտք չեն. ինչո՞ւ ադնարար շխտատվանով սե-  
փական անկարողութիւնը, յետոյ շքնկնելու համար այն-  
պիսի գրութեան մէջ, որ ամենաշարժ հարցերի վրայ  
թիթեւ աչքով ու անցարարար նայել, զօրցէ վնասելով  
գրանով գործին։ Ինչո՞ւ մեզ պարտաւորացնել ենթադրել,  
որ այդպիսի անհիթիթ վարմունքը զրոյված է նրանից, որ  
կան մարդիկ (ասենք ձեր խօսքով), որոնք «լը սիրեն լի-  
նել զրախ, բայց եթէ զլուխ չը լինին, չին գործեր և  
արգելք ալ կը հանեն»։

Ենթ ձեզ անկեղծ սրտով խորհարդ ենք տալիս թէ,  
աստուած կսիրէք, մի խօսէք բնութիւն այնպիսի խնդիր-  
ների վրայ, որոնց մասին դուք նայնչախ հասկացարու-  
թիւն ունէք, որչափ և շինական կայսրը, — այլապէս,  
հաւատացէք, որ ծիծաղելի է։ Թէ ինչ նշանակութիւն  
ունի սօցիալիզմն ու ասակապետական քաղաքական ա-  
զատութեան հիմունքների վրայ հաստատված ազգային  
անկախութիւնը հայ ժողովրդի համար մենք ձեզ խոր-  
հարդ կատարեալ տեղեկանալ բացի Հ ն չ ա կ ու մ սրանից  
առաջ տարազրկած յօդուածներից, նայնչախ այն համա-  
լուծ գետելով «Նոր հոսանք» յօդուածից։

Ար մ է ն ի ա ի խմբագիրն ասում է հեռեկալը. —  
«Հ ն չ ա կ ը Ար մ է ն ի ա է ն յառաջ անցած և զայս»

Թեան իրաւունք ունեցած լինելու համար հարկ կը հա-  
մարի այդպիսի խնդիրներով զբաղեցունել Հայերն» Գոս-  
պարոն, կարդում էք Հ ն չ ա կ ը և, ինչպէս երևում է,  
չէք էլ հասկանում նրան։ Գուք չէք հասկացել որ նա  
բոլորովին ուրիշ հողի վրայ է գնում հայկական յեզախտ-  
թութիւնը և բոլորովին այլ կերպ է հասկանում, առաջ  
գնում ու վճռում նրան վերաբերեալ քաղաքական ու-  
անտեսական խնդիրները, որոնք ձեզ համար զայտթիւն  
էլ չունեն։ Եթէ դուք Հ ն չ ա կ ն ե ր ը լու կարդացած  
ու հասկացած լինէիք՝ մի հրէշաւոր անհիթիթութեամբ  
պակաս գրած կլինէիք ձեր օրգանում և խուսափած էլ  
կլինէիք մեր վերաբերութեամբ ձեր ունեցած տգեղ կաս-  
կածից։

Բանը նրանուհն է, որ Ար մ է ն ի ա ի խմբագիրն  
թուում է, որ հէնց վերաբերված հարցերը յարուցանելով է  
Հ ն չ ա կ ը տարբերվում Ար մ է ն ի ա ի ց և մութ  
կերպով հասկացնում է, որ իբր մնացածը նման է իր  
օրգանին Այդպիսի կոմպլիմենտի (compliment) մենք չենք  
արժանացել Ար մ է ն ի ա ն ինչ է իրենից ներկայացը-  
նում, ինչպէս է հասկանում յեզախտութեան նշանակու-  
թիւնը, նրա դերը, նրա կատարելի գործերը — ամենեին  
յայտնի չէ։ Եւ չէր էլ կարող յայտնի լինել, որովհետեւ  
Ար մ է ն ի ա ն երբէք մի սրտ ուղղութիւն չէ ունեցել։  
Երբեմն նա ասում է ինչ - որ հայ «անկախ վիճակ» (ինչ-  
պիսի՞ «անկախ վիճակ» — յայտնի չէ. դա, նրա կարծի-  
քով, «մանրամասնութիւն» է), երբեմն գրանից նա իջ-  
նում է շատ ցածր ՅԱԳԻՍԻ բարեխնորք քարոզելով, նրա  
ածըր ամենով, որով խզճուկ Հ ա յ ա ս տ ա ն ի ծրագրին  
ու առած խնդիրներին է մօտենում, երբեմն գովում սու-  
թանին, երբեմն յարձակվում նրա վրայ, երբեմն յեզախտ-  
խտութիւն, արիւն ու կրակ է գոչում, երբեմն գրան հա-  
կատակ սուլթանից սպասում հայ ժողովրդի գրութեան  
բարեկարգութիւնը։ Գուչիլ ու ամեն ՅԱԳ յօդ. և «ան-  
կախ վիճակ», բղաւել յեզախտութիւն և ամեն կրթելու  
ընկերութիւն հիմնել, ասել ազատութիւն և սուլթանին  
յայտնել թէ նա չէ՝ մեղաւորը, որ հայը ամենովում է, այլ  
նրա պաշտօնեաներն են, աւագակային խմբերով ապրա-  
տանութիւն քարոզել և կարծել թէ յեզախտական ու  
քաղաքական գաղափարներ է քարոզում, պրօպագանդա  
էանում, — այդ բոլոր զուգնթացարար առաջ բերած իրար  
հակառակ, իրար հակասող մտքերն ու սկզբունքներն  
Ար մ է ն ի ա ն առանց խզճի խայթի խառնամանդարում է  
իրար հետ, խառնում իրար մէջ, ազաւազաւում, առանց  
մի վայրկեան անգամ, կարծես, նկատելու նրանց հակա-  
սութիւնները, ծայրահեղ տարբերութիւնները։ Եւ զգա-  
լով, ասես, իր մտքերի խառնաշփոթութիւնն, Ար մ է ն  
ի ա ն անցեալ ամառ գիտեց մի միտախտ, եթէ չտանք  
աւելի, միջոցի՞ գ ր ա մ ա կ ա ն մրցանակ նշանակելով  
նրանց, որոնք յօդուածներ գրելով նրան հայկական խըն-  
դրի մասին՝ «հայրենասիրական մտածումներով» լի իրեն  
«կօչնեն» ծրագիր կազմել Արիւն յօդուածներ յայտնվե-  
ցան «մրցանակի արժանի», սրանց մասին խօսել ու մա-  
մանակ կարցնել մենք միանգամայն հրատարկում ենք։ Եւ

Ա. ր մ է ն ի ա ի խմբագիրը, որ իր խոստովանութեամբ, կարօտում է «օգնութեան» մի ծրագիր կազմելու, ինքն իրեն նշանակում է գնահատող ու դատուար իր օրգանում հրատարակված «միջամտի արժանացած» երկու յօդուածները: O tempora, o mores. Եւ այդ բոլոր քաօսից, պարզ բան է, որ ոչինչ կղրակացութիւն չէ կարելի անել Ա. ր մ է ն ի ա ի ուղղութեան մասին և կարծես նա շարունակվում է հրատարակվել հէնց այնպէս հրատարակվելու համար:

Դա է Ա. ր մ է ն ի ա ն: Իսկ Հ ն չ ա կ ի ուղղութիւնը միշտ եղել է մէկ ու որոշ: Դա ներկայացրել է արդէն իր որոշ ծրագիրը և իր յօդուածներով, որ նուիրված են հայ ժողովրդական գործի գնահատման խնդիրների քննութեան, նա սպառնացել է, որ չէ կարող և չէ ուզում ֆրագներ բաց թողնել ու «փող փշի», այլ հարցերն ուղղում է քննել ու վճանել հիմնադրուած Դա ոչ միայն ստաջ բերելու հայկական ժողովրդական գործին ու յեղափոխութեան վերաբերեալ քաղաքական, սոցիալական խնդիրներ, որոնց մասին Ա. ր մ է ն ի ա ն չէր էլ երազում, այլ նա կազմեց յեղափոխական ծրագիր, ամենաորոշ կերպով ներկայացնելով նրա բոլոր կէտերի իմաստը՝ սկսած հ ն ա ա լ ո թ ն ու ա ա կ ի ց մինչև այսօր անկրկ պրակտիկական գործունէութիւնը:

Եւ մինչդեռ իր ստաժները հաշիւը չտարով Ա. ր մ է ն ի ա ն երբեմն երբեմն գոչում էր «անկախ միժակ», յեղափոխութիւն, ոչինչ բացատրութիւն չկցորդելով այդ խօսքերին, չյայտնելով յեղափոխութիւն անկախ միջոցները, — Հ ն չ ա կ ի մէկ անգամից ընդ միշտ հարկաւոր բացատրութիւններով հանդերձ յայտնեց, որ նա «անկախ միժակ» չի հ ա մ ա թ ի լ հայ ժողովրդի հասարակական կազմակերպութիւնը, եթէ սա, ազատվելով թիւրքի լծից, չկանօնաւոր է իր կացութիւնն ընդարձակ սամկապետական քաղաքական ազատութեան պայմանների համեմատ, եթէ թիւրք սուլթանից ազատվելով հայ ժողովրդի գլխին կանգնէ հայ իշխան, հայ սուլթան Այդ կէտին կից մենք միշտ գրել ենք աղջային անկախութեան հարցը, որ Ա. ր մ է ն ի ա ի խմբագիրը, խ ա ո ն ե լ ո Վ ի թ ա թ հ ե ա մ ե թ հ ն ա ա լ ո թ ու լ մ ջ ա ա կ ա յ ն ու ա ա կ ն ե թ ր Ե, չէ ուղղում յիշել, կարելի է արդեօր իմանալ թէ՛ ինչու... Եւ քարոզել ենք այնպիսի աղգային անկախութիւն, որը կամեփովէ ընդարձակ սամկապետական քաղաքական ազատութեան պայմաններում, և այնպէս ենք միշտ, որ այդպիսի աղգային անկախութեան պիտի զիմել ա յ ա ո թ և գրան հասնելու համար յայտնել ենք մեր համոզումը, որ պէտք է յեղափոխութիւն անել ժողովրդային, ազատամբութեամբ, որի միջոցները, — պատերազմական, կազմակերպական ու պրօպագանդական, որ այսօրուանից իսկ պիտի սկսել գործողիւ պրակտիկապէս, — սաանձին, սաանձին յօդուածներով ներկայացրել ու արժարժել ենք Հ ն չ ա կ ու մ և ի վերջոյ կէտ առ կէտ նշանակել մեր Ծ թ ա գ թ ու մ: Ա. ր մ է ն ի ա ի խմբագիրն մենք խորհուրդ ենք տալիս կրկին կարգաւ մեր Ծ թ ա գ թ ի թ ն ու Հ ն չ ա կ ն ե թ ր Ե

և եթէ ուղղում է խօսել մեր ուղղութեան մասին, թո՛ղ միշտ բարեխղճութեամբ վերաբերվէ դէպի մեր Ծ թ ա գ թ ի թ Ե իր կամքի համեմատ շինգաթիւրէ նրան. և այն ժամանակ նա կտեսնէ, որ մենք միայն հեռուոր նպատակի խնդիրներով չենք «զրազեցնում Հայերն», և այն ժամանակ նա լաւ կտեսնէ թէ ինչով է տարբերվում Հ ն չ ա կ ն Ա. ր մ է ն ի ա ի ց:

Ա. ր մ է ն ի ա ի խմբագիրը, որ ինքնահասան կերպով կարծում է թէ՛ միմիայն ինքն է «հմուտ Հայաստանի պէտքերին» ամբողջ երեք ու կէս տարուայ ընթացքում բացի ֆրագներից՝ գետ ոչինչ չէ ասել Հայաստանի պէտքերի ու արհամարհների մասին, ոչ էլ գարման ցոյց տուել այդ պահանջներին բաւարարութիւն տուող և այդ պատճառով նրա մեզ վրայ յարձակվելը թէ ծիծաղելի և թէ աններելի է:

Ի վերջոյ կանենք, որ Ա. ր մ է ն ի ա ի ց սպասում ենք պ ա թ ղ ո թ ո շ ծ թ ա գ թ ի թ յեղափոխական գործունէութեան ու նպատակների, և երբ նա այդ կանէ, այն ժամանակ մենք կտեսնենք թէ նրա ծրագիրը սրջափ է մօա Հ ն չ ա կ ի Ծ թ ա գ թ ի թ ն, այն ժամանակն էլ մենք կխօսենք միմեանց հետ հրապարակապէս և կվիճարանենք, եթէ հարկ լինի — կողմէք:

Շ ն ս թ հ ա կ ա լ ու թ ե ա մ թ ստացանք հետևեալ նպատակները. —

- Ս - բխից 3 - ից 10 Ֆր.
- Ղ - ի համակրողներից 10 բուրլի:
- Ժ - ից Ա - ից 56 Ֆր. և 30 բուրլի
- — N - ից 15 Ֆր.
- — Մ - ից 25 Ֆր.
- Պ - գից Ի - ից 25 բուրլի.
- Պ - լից Y - ից 2 օսմ. սակի.
- — Խ. Ղ - ից 30 Ֆր.
- Տ - սից Բ - ից 7 բուրլի.
- — Ծ - ից 5 բուրլի.
- Մ - լից Զ - կից 50 Ֆր.
- — Մ - ից 15 Ֆր.
- — Մի քանի ուսանող համակրողներից 50 Ֆր.:

Ուսանող համակրողներին յատկապէս յայտնում ենք մեր շնորհակալութիւնը Հ ն չ ա կ ի ն սամկան 20 - ա կան ֆրանկ նշանակելու համար:

- Կօլուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետևեալ հասցեով.
- Montpellier (France). — M. Beniard. Poste restante (Nr 25). Իսկ գրամ ուղարկել.
- Bale (Suisse). — M. Daniel. Poste restante.